



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

119

625

ՈՐԲ

ՄԱՏԻՂԻՆ

ԲԱՐՈՅՆԿԱՆ ՎԵՊ ԵՐԵՒԱՆՑ

ՀԱՄԵՐ

2

ՄՈՍԿՎԱ

1859

85
Ո-62

300000
1957

188 WESTLIE

6167



RECEIVED


8.5
n - 62 *ար*
ՈՐԻ ՄԱՏԻԼԻՑ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՎԵՊ ԵՐԵՒԱՆՑ
ՀԱՄԱՐ

Թ Ա Ր Գ Մ Ա Ն Ե Ց

ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂ

ԳԱՐԻԵԼ ՀԵԶՆԻՅԱՆՑ



ՄՈՍԿՎԱ

ԼԱԶԱՐԵԱՆՑ ՃԵՄԱՐԱՆԻ ՏՊԱԳՐԱՏԱՆԸ

1859

9
1002
6791

С.-П. ПЕТЕРБУРГЪ

Въздѣланіе народа въ Россіи

КНИЖКА

ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ

С. - Петербургъ, Ноября 17 дня 1858 года.

Ценсоръ *В Бекетовъ*

1000



Ի ՆՇԱՆ

ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՍԻՐՈՅ ԵՒ ԱՆՄՈՌԱՑ
ԲԱՐԵԿԱՄՈՒԹԵԱՆ

ԳԷՈՐԳ ԳԸՆԱՆՆԵՆՆԻՆ

ՆՈՒԻՐՈՒՄԷ

ԹԱՐԳՄԱՆՈՂԸ:

Ո Ր Բ

— Աղորմեցէք ինձ, խեղճ որբ եմ,
լալով ձայնեց Մատիլդան, մէկ խրճիթի
դուռը բաղխելով:

— Մտի՛ր, մտի՛ր, պատասխանեցին նո-
րան: Եղջիկն մտաւ խրճիթ: Ատա՜ծ
հնոցի առաջև տեսաւ մէկ պատուելի պա-
ռաւ կին նստած, երեխայն դրկին:

— Ա՛յլ ես դու, սիրելիդ իմ. հարց-
րուց պառաւն:

— Ես մի խեղճ որբ եմ, անտէր ու
անօգնական թողած ամէն կողմից, պատաս-
խանեց Մատիլդան:

— Աւրեմն ծնող չունենս :

— Հայրս ու մայրս մեռան, հիմա ես
գնումեմ Յիւրիս քաղաքը, որ իմանամ
քաղաքական կառավարութենումը, թէ
Վաղենատինիանոս հօրեղբայրս կենդանի է:
Հայրս շատ անգամ ասել է, թէ Յիւրիս
քաղաքումը մէկ հիւան եղբայր ունի: Աս-
րելի է նա ինձ ընդունի, որովհետեւ զա-
ւակ չունի:

— Դժուար է քո հասակումը որբ լի-
նելն: Խեղճ աղջիկ . . . : Ասա, հոգիս,
որտեղ էին կենում ծնողքդ:

— Մորս կենումէին այն գիւղումը,
որն որ սարերից թափած ձիւնի տակ մնա-
լով անհետացաւ: Այն ժամանակին ես
դաշտումն էի և արածացնում էի երեք
կով ու մի հօտ ոչխար: Յանկարծ ձայն-
ման ձայն լսեցի հինգ ժամուն մօտ . . . :

Վամենում էի տուն փախչել. յետ դառ-
նամ, տեսնեմ որ լերան մէկ մասն բաժանե-
լեցաւ ու ծածկեց բոլոր տները: Օհօղքս
այս ժամանակին տանն էին և այսպէս ան-
ակնկալ կորան: Այն օրից իմ տարաբաղ-
դութիւնս սկսեց:

Մատիլդան իւր պատուտած գոգնոցով
աչքերը սրբեց և նստաւ դեմնի վերայ,
որ սրտանց լայ: Յետոյ շարունակեց.

— Պեղեցիկ գեղ էր և յանկարծ անհե-
տացաւ, սառուցի, ձիւնի և ժայռի կտոր-
ներու տակը: Տէր Աստուած, ի՞նչ պէտք
է անեմ: Ալ թողնէք որ գիշերս այս-
տեղ մնամ:

— Ի հարկէ: Աս հաւաստի եմ, որ
որդիս քեզ միանգամայն ընդունի ևս, ո-
րովհետև նա շատ բարեսիրտ և բարե-
բար է խեղճերի համար: Քաղցած չե՞ս.

Ես քեզ բան կըտամ ուտելու, մինչև մե-
րայինք դան ընթրիք անելու:

Բարի պառաւն վեր կացաւ, հանեց
տաշտից հացի կտոր և տուեց որբին: Մա-
տիլդան վեր առաւ հացը, շնորհակալու-
թիւն արեց իւր բարերարին և մեծ ա-
խորժակով սկսեց ուտել: Մինչև որ նա
կ' ուտէր, պառաւ Ալօղվինան հարցրեց, թէ
քանի՞ տարեկան է նա կամ ի՞նչ արհեստ
գիտէ:

— Ես տասն ու կէս տարեկան եմ, պա-
տասխանեց նա, տան կառաւարու թիւնը
բաւականին լաւ գիտեմ, նմանապէս կա-
րել, ձեւել և գործել: Բայց ես կարեացս
համեմատ ամէն բանի համար պատրաստ եմ:

— Ունե՞ս արդեօք վկայական ճնօղացդ
վերայ:

— Հրամե՛րէք, ունեմ . . . : Ե՛հա կա-

պած է թաշկինակիս մէջ, որն որ պարզե-
ւեց ինձ Շ վեցայուամբ պանդոկապետի կինն:

Աղջիկն բաց արեց մէկ փոքրիկ կտա-
ւի կտոր և հանեց վկայականը, որն որ
տուել էին այն տեղի քահանայն և գիւ-
ղապետն: Այս վկայականի մէջ գրած էր,
թէ Մատիլդան խեղճ որբ է և գնում է
Յիւրիս հօրեղբօր մօտ, որ երևի, դեռ
կենդանի է:

Ալօղվինան ակնոցները հաղաւ, կարդաց
վկայականը և բաւական մնաց: «Նա շա-
րունակեց աղջկայ հետ խօսելը և զարմա-
ցած էր որբի հանձարեղ պատասխաննե-
րի վերայ: Յանկարծ դուռը բացւեց և
Մէինրադն իւր կնոջ հետ ներս մտաւ:
Պառաւն վեր կացաւ տեղից, մօտացաւ նո-
րանց և տալով երեխայն իւր մօրը, պատ-
մեց, թէ ի՞նչ կերպիւ այն որբն ձիւնի

տակ մնացած գիւղից ազատուելով՝ իրանց
խրճթում երևեցաւ :

— Շատ լաւ էք արել որ սորան ըն-
դունել էք, ասեց Սէինրադն : Չէ պէտք
մարդ երբէք հրաժարվի որբոց պաշտ-
պան լինելից : Աստուած հրամայում է օգ-
նել խեղճերին, ուր մնայ թէ որբերին :
Այս աղջիկն քանի որ կամենայ կարօղ
է մեզ մօտ մնալ . հացը սորա համար պատ-
րաստ է : Թէ լաւ կը վարվի, այն ժա-
մանակ կը տեսնենք թէ ի՞նչ կարելի է
սորա համար անել :

— Աս միշտ լաւ եմ վարվել, պատաս-
խանեց Մատիլդան . ես ամէն ժամանակ
կը կատարեմ այն, ինչ որ ծնողքս պա-
տուիրում էին : Աստուծոյ օգնութեամբ
իմ պարտաւորութիւններս լաւ կը կա-
տարեմ :

— Տեսնենք, կրկնեց Մէինրադը, աղջկայ ուսին խփելով. քո պարզմտութիւնն ինձ շատ հաւանելի է: Այս աղջիկն՝ թէ խելօք կը լինի, մեզ մօտ կը մնայ. չէ, Այրենա:

— Տեսնենք, սառը սառը պատասխան տուեց Մէինրադի կինն:

Արեկոյին Մատիլդան աշխատումէր օդնել նորանց, և ինչ որ հրամայումէին, բոլորը մեծ ուրախութեամբ էր կատարում: Նա, կարծես թէ, իւր բարեբանների կամքը գուշակումէր: Անթրիքից յետոյ հրամայեցին նորան խոտանոցումը քընել, մի փոքրիկ էլ վերմակ տուին: Գնալուց առաջ նա մի անկիւնումը ծունր կրկնեց, ջերմեռանդ կարդաց երեկոյեան աղօթքը. յետոյ բարևեց տանտէրանց հետ,

ցանկալով նորանց բարի գիշեր և քաղցր
ու խաղաղ քուն :

Խոտի վերայ բարձրանալով , նա կըր-
կին աղօթք արաւ և խնդրեց Մատուծոյ ,
որ նա հովանաւոր լինի : Ինքն խոստացաւ
նորան միշտ սիրել ու հեռանալ այն բա-
ներից , որոնք արժանի են յանդիմանու-
թեան :

Առաւօտը վեր կացաւ շատ վաղ ու
գործ ուզեց իւր համար : ‘Նորան հրամա-
յեցին դաւիթը և սենեակները աւելել :
Մասիլդան ուրախութիւն կատարեց այն :

Արեւնան միայն երկու տարուայ պսա-
կած էր Մէինրադ գիւղացիի հետ : Բայց
իւր վատ վարքով շատ էր նեղացնում ա-
մուսնոյն և Ալոդվինային : Արովհետեւ Արե-
ւնան փոքր ինչ աւելի հարուստ էր Մէ-
ինրադից և ուշ ու միտքը իւր արտաքին

գեղեցկութեան վերայ ունէր դրած: Աթէ
մարդ գեղեցկութեան հետ հոգևոր բարի
որպիսութիւններ էլ չունի, վտանգի մէջ
է: Մատիլդան հէնց առաջի օրը հաս-
կացաւ Ալեքեանայի բնութիւնը ու գուշա-
կեց, որ իւր դեռահաս տիկինից շատ նե-
ղութիւն պէտք է քաշի: Արբն վճռեց,
որ երբ գիւղացիի կինն սկսի տրտնջալ,
ինքն լուռ մնայ և ամէն կերպիւ աշխա-
տի որ նորան բարկանալու պատճառ չը-
տայ. բայց այնու ամենայնիւ Մատիլդան
համարեա՛ ամէն լոպէ մեղադրանքի տակն
էր և երբեմն Ալեքեանայի բարկութիւնն
շատ անիրաւ կերպ էր ստանուում:

Խեղճ արջիկն այս չար կնոջէն միշտ
դողում էր, թէպէտ խղճմտանքն իւրեան
չէր յանդիմանում ոչինչ բանի մէջ: Մէ-
ինրադն շատ անգամ այս անիրաւ վար-

մուկնքը տեսնելիս պաշտպանուժէր որբին .
և այս առաւել էր զինաւորում Ալեքե-
նային Մատիլդայի դէմ :

Ալեքշապէս տիկինն միանգամ այնպէս
բարկացաւ խեղճ աղջկայ լռութեան վե-
րայ, որ բոլոր ուժով մղեց նորան, ասելով .

— Գնա՛, կորի՛ր տանիցս, ուր որ ու-
զուժես . ես չեմ սիրում որ տանս թափա-
ռական մարդիկ լինին :

Ամենեին չըտրանջելով իւր վիճակի
վերայ, որբն կանգնեց ընկած տեղեցը,
չնորհակալութիւն արաւ տանն ու մէկ
օրուայ հիւրընկալութեան համար, առաւ
իւր կապոցը ու դուրս գնաց :

Անծանօթ լինելով այն կողմերին ընտ-
րեց նա այն ճանապարհը, որն որ առաւել
լայն էր : Արեկոյեան հասաւ մի գիւղ,
որոյ անունը չէր իմանում : Մի կողմից

վաստակած, միւս կողմից քաղցած լինելով,
նա բաղխեց առաջին խրճթի դուռը
և հաց ուղեց: Աղջիկն մեծ զգուշութեամբ
բաց արաւ դուռը և տեսաւ անկողնի մէջ
պարկած մարդ, որ երևումէր սատիկ հի-
ւանդ: Աողքին նատած էր կին ու լալիս էր:

Սատիլդան իւր խնդիրը րայնպիսի սրը-
տաշարժ ձայնով կրկնեց, որ ողբացող կինն
վեր կացաւ ու տուեց նորան մի կտոր հաց:
Մինչև աղջիկն ուտումէր, հիւանդն կան-
չեց իւր կնոջը և ասաց ականջումը: Տան
տիկինն սկսեց հարց ու փորձ անել Սա-
տիլդային, նորա ծնողաց և տոհմի վերայ:
Որքն նկարագրեց իւրնեղ դրութիւնը րայն-
պիսի սրտաշարժ խոսքերով, որ տանու-
տէրքն թոյլ տուին նորան խրճթումը մնալ:

Այս խեղճ մարդկանցը՝ անպատճառ
հարկաւոր էր մի օգնական, որովհետև տա-

նուտէրն արդէն վեց ամիս էր, որ հիւանդ էր բարակացաւով. իսկ նորա կինն անդադար զբաղեալ լինելով, զգումէր որ իւր զօրութիւնն էլ պակասումէ: Մատիլդան շուտով իւր կապոցը դրեց մի անկիւնում և սկսեց հիւանդին ծառայել: Ննչքան որ կարելի է երեխայից պահանջել, նա կըրկնապատիկ էր անում, ու միանգամայն հիւանդի պահելուն տուաւ իւր գլուխը:

Շատ անգամ, երբ տանտիկինն մի քանի ընդէ կը հանգստանար, որքն հիւանդի կողքին նստած՝ մխիթարումէր, սուրբ գիրքը կարդալով: Հիւանդի ցաւի սաստկութեան ժամանակ նորա գլուխը կը բռնէր, կը խմեցնէր, ճակատի քրտինքը կը սրբէր, մէկ խօսքով ամէն կերպիւ աշխատումէր իւր տանտիրոջ ցաւը թեթեւացնել: Մատիլդան ամէն ժամանակ հի-

ւանդի անկողինը շատ մաքուր էր պահում,
 շատ անգամ լուսամուտը բաց կ'անէր, որ
 հիւանդին մաքուր օդ ծծել տայ: Արբի
 հոգացողութեամբ հիւանդն շատ էր թե-
 թեանում և շատ անգամ իւր շնորհակալու-
 թիւնը յայտնումէր նորան արտասուքով:

Անգութ աշունն եկաւ: Տերեւներն սկը-
 րան վայր թափիլ, ծիծեռնակներն ու ա-
 րագիւններն իւրեանց ամարային բնակու-
 թիւնը թողին: Հիւանդն զգումէր որ շու-
 տով կը մեռնի: Այս պատճառաւ հաղորդ-
 ւելից յետոյ, կանչեց իւր կիներ ու նուազ
 ձայնով ասեց.

— Սիրելի Աւրսուլայ, դու տեսնու-
 մես որ ես շուտով պիտի բաժանուեմ, մին-
 չև միւս կեանքի տեսնուելը: Կու գիտես
 թէ որքան ես քեզ սիրումեմ: Ես քեզ
 հետ սասնուութեամբ տարի ընդմեջ եմ սիրում:

2002
 107

Հ.Ս.Խ.Լ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
 *Ս.Ս.Ր.Ա. ԸՍԾԵՆԱԿԱՆ ԿՈՆՍՏԱՆՍՆԱԿԱՆ
 7/31-1922²
 ԿՈՆՍՏԱՆՍՆԱԿԱՆ, ՄԵՍԿԻՅԱՆԱ
 ԿՈՆՍՏԱՆՍՆԱԿԱՆ ԿՆՆԱԿԱՆ

քան ժամանակումս մենք մասնակից էինք
միմեանց տխրու թեանն էլ, ուրախու թեանն
էլ: Այժմ մեռնելիցս առաջ երկու բան
եմ խնդրում քեզանից. առաջինն՝ որ չը
մտանաս ինձ աղօթքիդ մէջ. երկրորդն՝
քանի կարող ես լաւ վարձատրես մեր
Մատիլդային, որին մենք շատ պարտաւոր
ենք այս երեք ամսուայ սրտացաւ ծառայու-
թեան համար: Բայց ի՞նչ տանք, որ մենք
հարուստ չենք: Ահա իմ կամքս: Այս ան-
տէր և անօգնական աղջկան հոգևորդի շի-
նիւր քեզ, որովհետև մենք էլ անզաւակ
ենք: Աւ յետոյ այս խրճիթը իւր երկու
դաշտովը, որն որ մեր աշխատանքով ենք
ձեռք բերել, տուր դորան:

Հիւանդն ուզումէր շարունակել խօս-
քը, բայց նոյն բոպէին մտաւ ներս Մա-
տիլդան, լուացքի զամբիւղը ձեռին:

Աւրաուլլան նորան կանչեց իւր մօտ և
աղիողորմ ձայնիւ ասեց .

— Այս քեզ պէտք է առաջարկութիւն
անեմ . . . :

Մատիլդան վախեցաւ, կարծելով թէ
Աւրաուլլան նորա ուշանալու վերայ է կա-
մենում բարկանալ : Տանտիկինն նորա դէմ-
քի փոփոխութիւնը նկատելով, բռնեց նո-
րա ձեռիցը և սկսեց շարունակել .

— Մի վախիւ, սիրելի Մատիլդա,
ես ոչինչ բանում պատճառ չունեմ քեզ
յանդիմանելու : Բնդ հակառակն ես ուզու-
մեմ քեզ վարձատրել աշխատանացդ և հո-
գացողութեանցդ համար : Գու խեղճ ես և
ծնողք չունես, ցանկանում եմ մեր աղջկի
դառնալ :

— Ահ, մի՞թէ այդքան բարեբարու-

Թեան արժանի եմ . . . ասեց որքն ուրա-
խանալով :

— Եւ հարկէ, դու արժանի ես խնա-
մատարու թեան : Տեսնու՞մես, բարի գոր-
ծքն անվարձ չէ մտում երբէք : Աւ եթէ
դու մեզ մօտ կը մնաս ու այնպէս կը վար-
վիս՝ ինչպէս հիմա, մեր փոքրիկ ստա-
ցուածքն էլ քեզ կը տանք :

Աչքերը արտասուքով լեքը, ընկաւ
Մատիլդան ծնկան վերայ և ասեց .

— Այո՛, ես յաւիտեան գոհ կը լինեմ
ձեզանից և յաւիտեան կը սիրեմ ձեզ :
Թէ դուք կամենու՞մէք ծնօղք լինէք ինձ,
ուրեմն օրհնեցէք ձեր աղջիկը :

Հիւանդն բարձրացրեց ձեռը և աղա-
չեց զԱստուած, որ այս խեղճ աղջկանն
հովանաւոր լինի : Յետոյ Աւրսուլլան կան-
գնեցրեց Մատիլդային և գրկեց նորան :

Ներքն 'ի միասին լալիս էին ուրախու-
թիւնից :

Այս ժամանակին դուռն բացուեց և այն
գիւղի քահանայն ներս մտաւ : Տեսնելով
նորանց արտասուքը, նա կարծեց թէ հի-
ւանդի գրութեան վերայ են լալիս, բայց
երբ իսկ պատճառը իմացաւ, գովեց եր-
կուսին ևս այս բարի գործի համար :

— Խեղճ որբ ընդունելն շատ լաւ պատ-
րաստութիւն է դէպ 'ի մահ : Թէ որ մէկ
բաժակ ջուրն, որ խեղճին տալիս ես, ան-
վարձ չէ մնում, որքան աւելի վարձ պետք
է ստանայ այս գործն՝ յաւիտենական կեան-
քումը :

Յետոյ քահանայն դարձաւ դէպ 'ի Մա-
տիլդան ու շարունակեց .

— Դու այս պատուելի մարդկանց սի-
րոյն մինչև այնքանն արժանացար, որ քեզ

որդեգիր շինեցին: Հիմա կրկնապատիկ աշխատիր վարվել այն կանոններով, որովք մինչև այժմ: Աստուած քեզ օգնական կը լինի: Սուրբ գրքումը գրած է, թէ Աստուած հովանաւոր է որբերի վերայ, ու այն մարդկանց, որոնք նորա վերայ դնումեն իւրեանց յոյսը:

Այս զգալի դիպուածից քանի մի օր յետոյ՝ հիւանդն մեռաւ: Աինն անմխիթար լալիս էր իւր ամուսնոյ կորստեան վերայ: Թեպէտ Մատիլդան շատ մատղահաս էր, այնու ամենայնիւ աշխատումէր մխիթարել այլի կնոջն: Բայց պէտք է ասած, որ նա շատ տրամուծէր շինականի մահուան վերայ, ինչպէս իւր սեպհական ծնօղի:

Մի քանի օրից յետոյ Աւրսուլլան էլ հիւանդացաւ ու ասեց որբին, թէ շուտով ինքն էլ կը տեսնվի իւր ամուսնոյ հետ

գերեզմանի մէջ: Աղջիկն անմխիթար ու
դառն լալիս էր: ‘Նա յոյս ունէր թէ Աւր-
սուլլի հետ այն խրճիթի մէջ հանդարտ
կ'ապրի, այժմ նորան էլ մահն ուզումէր
բաժանել: Արբն այն պատուելի մարդկանց
մէջ հազիւ թէ գտել էր իւր ճեօղքը,
հիմա կրկին անգամ պէտք է որբանար:
Այս միտքն նորա աղէքը կտրատումէր:
Այսու ամենայնիւ նա մի և նոյն հոգատա-
րութեամբ նայումէր իւր մօրը:

Աւրսուլլի ազգականքն ամէն օր գալիս
էին նորան տեսութիւն անելու և լսու-
մէին նորանից, որ Մատիլդային որդեգիր
և ժառանգ է շինել իւր կալուածոց վե-
րայ: Քարեկամներն շատ անբաւական էին,
որ հարստութիւնն պէտք է հասնի Մա-
տիլդային:

— Մի՞թէ մենք պէտք է այս ժառան-

գութիւնը նորան թողնենք, որ մեղ է
պատկանում, ասումէին նորա միմեանց :
Ո՛չ, մենք նեղ տեղ ընկած ժամանակն՝ ու-
ժով տէր կը դառնանք ժառանգութեանը :

Այսպէս էր այս ազահ մարդկանց
վճիռն : Անակնունելի դիպուածը միջոց
տուեց նորանց իւրեանց չար մտադրու-
թիւնը կատարել :

Ուրսուլլան՝ որ քանի մի ժամանակ ան-
կողնումն էր պարկած, յանկարծ այնպի-
սի անդամալուծութեան ցաւ ստացաւ, որ
ո՛չ կարողանումէր խօսել և ո՛չ էլ աջա-
կողմը շարժել, թէպէտ ամէնին ճանաչու-
մէր : Արբ Ուրսուլլայի բարեկամներն ի-
մացան նորա այսպիսի դրութեան մէջ լի-
նելը, միտքը դրին որ Մատիլդային հե-
ռացնեն :

Արդէն ձմեռն էր և շատ ցուրտ ժամա-

Նաակ : Բոլոր ճանապարհներն ձիւնով պատած էին : Տասը ժամին՝ որքն հիւանդի անկողնի մօտ նստած էր, երբ դուռը սկըսեցին բաղխել :

Աղջիկն շուտով ոտին կանգնեց, վեր առաւ ճրագը ու գնաց բաց անելու, կարծելով թէ Ուրսուլլայի բարեկամներից մէկն եկել է, որ գիշերը նորան պահպանի : Ճրագը դրեց գետնի վերայ, որ նեցուկը յետ քաշէ : Գուռն շուտով բացուեց, և մի մարդ լայն վերարկուն հագին՝ բռնեց որբը, գլխին մի սև թաշկինակ փռեց, առաւ վերարկուի տակ ու ձիու վերայ նստած՝ վազ աուեց :

Այս բոլորն այնպէս շուտով պատահեցաւ, որ Մատիլդան, արդէն իւր բնակարանից շատ հեռու էր, երբ զարմանքից դուրս եկաւ : Խեղճ աղջիկն ուզումէր խօս-

սել, բայց յամիշտակօղն նորան հրամայեց
ձայնը կտրել, և խոստացաւ գետը ձգել՝
թէ որ մի փոքր շարժի տեղեցը: Մա-
տիլդան ահամայ կամօք անշարժ մնացած
էր: Ա՛խ, այս խեղճ աղջիկն ի՞նչ ար-
գեօք չ'կրեց: Այնպիսի մատղաշ հա-
սակումը, այն ձմեռնային սառն գիշերին,
նա մի անհաւատ դաղանի ձեռի տակ ըն-
կած, չը գիտէր թէ ուր են տանում: Արև-
կի նա բաղդաւոր ու երանելի էր Աւրսուլ-
լայի խրճ թումը, — այսօր նորան ուժով
և այսպէս անաստուած կերպիւ հեռա-
ցրին, չտալով այնքան ժամանակ, որ իւր
բարերարացը գոնէ բարեաւ մնաք ասէր...:
Ո՛վ հիմա պէտք է հիւանդի ետեից ման
դայ, նորան տէրութիւն անի: Ո՛վ նորա
աչքերը պէտք է ծածկի: Նորա գերեզ-
մանի վերայ ո՛վ պէտք է լաց լինի: Աւր-

սուլլան (խօ) ուրիշ որդիացրած աղջիկ
չունի :

Ահա ինչպէսի մտքերումն էր տատանու-
վում : Նա առաւել շատ էր մտածում
Ուրասուլայի՝ քան թէ իւր դրութեան
վերայ : Նւ այն անձանութի փեշի տակին
մերթ լալիս էր, մերթ ա՛խ քաշում : Յան-
կարծ ձին կանգնեց մէկ անտառի մուտքի
մօտ :

Չիաւորն շտապումէր. վեր առաւ որ-
բին, բաց թողեց գետնի վերայ և դադա-
նային դէմքով ասեց .

— Արդուի՛ր այստեղ, Աստուծոյ ա-
ռաջև, որ այս գիշերւայ պատահմունքը
նչ ոքին չես ասիլ և չես աշխատիլ եր-
բէք գտնել այն գիւղը, որտեղ մէկ տա-
րից աւելի էիր կենում :

Մատիլդան ցրտից ու վախից դողա-

լով՝ մի քանի անխմանալի խօսքեր փրնթփնթաց :

— Աթէ մի մարդու կասես, որ դու Ա...ի գիւղումը կեցել ես, շարունակ կեց անձանօթն, գիտացի՛ր՝ կեանքդ վտանգի մէջ է : Մենք քեզ ամէն տեղ կը գրասնենք :

Որքն մինչև այնքան վախեցաւ այն կատաղած մարդու սպառնալիքից, որ չոքեց ծնկան վերայ և խոստացաւ յաւիտեան ո՛չ ոքի չ'ասել այն օրւայ պատահմունքի վերայ :

Ինչպէս երևումէր, խստասիրտ ձիաւորն բաւականացաւ Մատիլդայի խոստմունքով : Նա նորա առաջը երկու ուրբի արծաթ գցեց, նստեց ձիու վերայ ու վազեցրուց :

Ահա մեր որքն էլի առանց ապաստանի է : Նա կարծում է թէ այս ամէնը


տեսնուամ է երազում: Այն փողերը վեր
առաւ, դրեց գոգնոցի գրպանումը: Յե-
տոյ սկսեց չորս կողմը նայել, որ այն տե-
ղի հետ ծանօթանայ. բայց ափսոս որ ոչ
ինչ համարեալ չէր երևում, որովհետեւ
լուսինն արդէն մայր էր մտնում: Համա-
տարած լուսթիւն էր թազաւորում չորս
կողմը ու միայն Մատիլդան էր կենդանա-
ցնում բնութիւնը իւր ներկայութեամբ:
Ինչ զարհուրելի դրութիւն է: Մանկա-
հաս աղջիկն միայնակ, յունվարի գիշերը,
անծանօթ տեղումը թողած անտէր՝ անօգ-
նական: Նա անդադար ահ ու դողի մէջ
պէտք է լինի, որ չը դառնայ վայրենի գա-
զաններու զոհ:

Այս դրութեան մէջ որքն ընկաւ ծըն-
կանց վերայ, որ աղօթք անէ:

— Աստուած իմ, դողդողալի ձայնով

կանչեց Մատիլդան, ինձ մտում է մէկ
յոյս, այն յոյսն դու ես: Ահ, մի թո-
ղուր ինձ:

Յրտիցն ու վշտիցը էլ չըկարաց խո-
սել: Բոլոր ոյժը հաւաքելով, նա կանդ-
նեց ոտին ու սկսեց այն ճանապարհով գը-
նալ, որի հետքը ձիւնի տակ տեսաւ:



ՄԵՏԻՂԻՆ ԼԻՅՆԵՐՆԻ ՄԷՑ:

—

Աղջիկն մի քանի ժամ գնումէր: Յըրտից ու վաստակելից տկարացած, առաւօտեան արշալուսին հասաւ մի քաղաքի դըրան, որի անունը չէր իմանում: Այս քաղաքն էր Նիւցերն, որնոր մէկ կողմից սահմանակից է լճին ու գեղեցիկ լեռներուն: Էռուից, կարծես թէ, քաղաքն կանգնած է ջրի մէջ:

Մատիլդան քաղաքը մտածին պէս՝ գնաց ուղիղ եկեղեցին, որտեղ ճաշուայ ժամու զանգակ էին տալի: Աղջիկն մեծ Աստուածպաշտու թեամբ ու հաւատով ա-

ղօթք էր անում : Նորան թվում էր , թէ
ներքին ձայնն խորհուրդ չէ տալի՝ որ այս
քաղաքումը մնայ , բայց հրամայում է որ
գիւղի մէջ պտուտէ իւր համար ապաստա-
նարան : Ակեղեցից դուրս գալից յետոյ՝
նա հաց գնեց ու ուտելով ման էր գալիս
փողոցներումը , որ կարելի է պաշտպան
գանէ : Նա շատ ամաչումէր ուրիշից ողոր-
մութիւն ուզել , որովհետեւ մտածումէր
թէ ուրիշի փողով ապրելն մեղք է , երբ
ինքն կարող է իւր աշխատանքով հաց
ձարել :

Աղջիկն նստեց վերելքի վերայ և սկը-
սեց նայել անց ու դարձ անողներին , որոն-
ցից մէկն աղօթք անելու էր գնում , միւսն
եկեղեցից էր դուրս գալի : Այս ժամանակ
մի կին հարցրեց նորան թէ ո՞վ է . նա
իւր ցաւալի դրու թիւնը պատմեց : Յե-

տոյ հարցրին Մատիլդայից թէ ունի՞ արդեօք նա գրաւոր ապացոյց, որով հաստատուում լինին նորա ասած խօսքերն :

Այս հարցմունքն խեղճ աղջկան շատ վերաւորեց : Արբ հանեցին խրճթից, նա՛ ի հարկէ չըկարաց իւր թղթերը հետը առնել : Ի՞նչ արդեօք պատասխան տայ այն կնոջը : Թէ որ պատմէ այն պատահմունքը, իւր խոստմունքից պէտք է դուրս գնայ : Աւերջապէս վճռեց այն կնոջն ասել, թէ կորցրել է իւր թղթերը և թէ աղաչում է, որ խղճայ նորա որբութեան վերայ :

Տիկինն բաւականալով նորա անկեղծ խօսքերով, հրամայեց որ յետը գնայ : Մատիլդան ուրախութեամբ գնաց այս նոր բարերարի տուն : Այս տիկինն շատ տարիից արդէն այրի էր մնացած և միմիայն

մէկ տղայ ունէր Մատիլղայի հասակով :

Մեր որբին յանձնեցին տնտեսութեան մի մասը և շուտով ամէնքն սիրեցին նորան, որովհետև ամենայն բանը կատարումէր ջանքով, մտադրութեամբ և շտապով :

Ահա Մատիլղան կրկին մեծ բաղդաւորութեան մէջ է : Անուամ է ամենագեղեցիկ ու շքեղ տանը և ծառայումէ շատ բարի ու համեստ տիկնոջը, որնոր մեծ հաւատարմութիւն է տուել նորան : Մատիլղան նոյնպէս իւր կողմից աշխատումէր որ աւելի մեծ հաւատարմութիւն ու սէր գրաւէ իւրեան :

Գարունն հասաւ : Մատիլղայի տիկինն գնաց ամառանոց բնակելու, որնոր Ջեմբախ լճի մօտ էր : Ամառն մեր որբի համար անց կացաւ բոլորովին երջանկութեամբ : Օգոստոսի վերջերումը տի-

կինն հիւրընկալութիւն արեց և Մատիլդան ճաշի ժամանակ ծառայումէր շատ ուրախ սրտիւ, չըզուշակելով բնաւին, թէ ինչ տարաբաղդ վիճակ է պատրաստուում այն օրը խեղճ որբի համար:

Արբ հիւրերն պարտէզ գնացին ման գալու, ծառաներն սկսան սեղանը հաւաքել և տեղաւորել: Մատիլդան արծաթեղէնը տարաւ դրեց դարանում: Օսուաներից մէկն՝ երբ արծաթեղէնը համարումէր, տեսաւ որ երկու դրդալ պակաս են: Նա հարցրեց Մադիլդային թէ ի՞նչ են եղել. Մատիլդան պատասխանեց, թէ չ'զխտեմ, բայց պէտք է որ գտնուի:

Օսուայն՝ աղջկայ պատասխանով չը բաւականացած՝ պատմեց իւր ընկերներին այս պատահմունքը, որով մեծ շփոթութիւն ծագեցաւ: Քողորքն սկսեցին խեղճ

Մատիլդային մեղադրել ու գողութեան
մէջ զըպարտել, թէպէտ ոչինչ բանով
հաստատել կարող չէին: Այս բանը տան-
տիկնոջն էլ իմաց տուին և նա հրամայեց
իւր մօտ կանչել աղճիկը: Մատիլդան
իսկոյն եկաւ:

— Մի՞թէ այդքան անգոհ ու երախ-
տամոռ գտնվեցար, ասաց տիկինն, որ
թոյլ տուիր քեզ գողանալ արծաթեղէն:
Աս քեզ ընդունեցի մօտս, երբ մի ապաս-
տանի տեղ չունէիր: Քեզ հետ ամէն ժա-
մանակ քաղցրութեամբ էի վարւում, այս
է քո շնորհակալութիւնը: Աթէ դու մի
բանի կարօտութիւն էիր քաշում, չէ՞իր
կարող ինձ ասել, քան թէ այդպիսի ան-
խիղճ միջոցներ գործ ածել:

Արբն, որ վատ բանի վերայ մտածելից
անգամ վախումէր, սկսեց աղի արտասու-

քով լալ, երբ լսեց, թէ իւր սիրելի աի-
կինն գողութեան մէջ է մեղադրում նո-
րան: Մատիլդայի սիրտն այնքան շփոթ-
հաւեց, որ չկարաց պատասխան տալ: Յե-
տոյ տուկտոր խօսքերով ասեց.

— Տիկին, ես գող չեմ...: Ինձ 'ի
զուր են մեղադրում...:

— Ի՞նչ, դու համարձակում է՞լ ես
ասել թէ գող չեմ, երբ բոլոր ծառայքս
քեզ են մեղադրում: Տես, ո՛չ թէ միայն
դու գողանումես, այլ և սուտ ես խօսում:
Չարմանալի բան է որ այդ հասակիդ մէջ,
այդպիսի վատ բարուց տէր ես: Աս քեզ
ասումեմ, որ իմ տանս, ո՛չ ստախօս և
ո՛չ գող մարդ եմ պահում...: Ուրեմն
խոստովանվի՛ր, թէ չե՛ կհրամայեմ բան-
տը տանել:

— Աս չեմ կարող խոստովանվել այն

մեղքի մէջ, որնոր չեմ գործել, պատաս-
խանեց Մատիլդան: Աս ոչ գող եմ և
ոչ ստախօս . . . : Աւ թէպէտ մի խեղճ
որբ եմ, բայց գիտեմ թէ ի՞նչ բանն է
խղճմտանքի ընդդէմ: Օնտղքս ինձ համար
ոչինչ չեն թողել, բաց 'ի այն որ արգե-
լել են ինձ ուրիշի ունեցածին չը մօտե-
նալ ու սուտ չը խօսել: Այս, ի՞նչ կը
լինէր նոքա ապրել էին որ ինձ այսօր
գողութեան մէջ չէին դատապարտել:

Տան տիկինն անհամբերութեամբ լսեց
Մատիլդային: Աս չէր հաւատում որ ա-
ղախինն մեղաւոր լինի, որովհետև մինչև
այն ժամանակ ամենևն ին մէկ սխալանք չէր
տեսած. բայց մի և նոյն ժամանակ էլ այն-
քան ծառաների հաստատ մեղադրանքը չէր
կարող չ'ընդունել: Տիկինն անհանգստու-
թեամբ սենեակն էր չափում շրջելով և

չէր գիտում, թէ ինչպէս վճռէ: Մէկ
կողմից ցանկանումէր որ Մատիլդան ար-
դարանայ, միւս կողմից՝ այս բանը նորա աչ-
քին անկարելի էր երևում: Ա երջապէս
նա շաւ համարեց, որ այս գործի վճիռը
դատաւորին յանձնէ: Թէ աղախինն մե-
ղաւոր է՝ այս նորա համար մեծ դաս կը
լինէր ու նորա վատ սովորութիւնքը կը
ոչնչացնէր:

Ամէնքն այս խեղճ որբին արհամարհե-
լով՝ գողի տեղ էին դրել ու հրամայել
էին, որ տանտիկնոջ սենեակից չը համար-
ձակվի դուրս գալ: Տիկինն դատաւորի մօտ
նամակ գրեց և երբ նա եկաւ, յայտնե լով
բոլոր գործը խնդրեց, որ ներողամիտ լի-
նի դէպ ի խեղճ աղախինը:

Տիկնոջ խօսքը լսելով, Մատիլդան
դատաւորիցը հրաման ուզեց խօսելու:

— Աչ թէ ես եմ արծաթեղէնը հա-
ւաքել, այլ մի և նոյն ծառայն, որ ինձ
առաջի անգամ մեղադրեց գողութեան մէջ:
Կողովը տանելիս՝ ես մինչև անգամ չը մտա-
ծեցի ել որ բաց անեմ, տեսնեմ մէջը
ինչ կայ: Եւ որովհետև ես իմ անմեղու-
թիւնս լաւ գիտեմ, այս պատճառաւ ոչ
ինչ ներողամտութեան կարօտ չեմ: Խեղ-
ճութիւնն երբէք ինձ չէ կարող հարկա-
դրել վատ գործի ձեռնամուխ լինել:

Քատաւորն զարմացաւ Մատիլդայի
մեծահոգութեան վերայ և սկսեց հարց ու
փորձ անել, թէ ո՞ւր է ծնվել, ո՞րտեղ են
նորա ծնողքը: Արբն պատասխանեց բոլոր
հարցմունքն ին համարձակ, ուստի դատա-
ւորն նկատեց, որ նորա երեխայական խակ
միտքն ժամանակից առաջ է բացուել, զա-
նազան տարաբաղդութիւններ քաշելով:

Դատաւորն կանչել տուաւ այն մեղա-
դրող ծառայն և նորա ասածը ուշադրու-
թեամբ լսելից յետոյ՝ տեսաւ՝ որ Մատիլ-
դայի ընդդէմ ոչինչ չ'կայ :

Դատաւորն ծառային հարցրեց .

— Նրբ արծաթեղէնը կողովի մէջ
գնում էիր, համարեցիր արդեօք :

— Ա՛յ :

— Ուրեմն պէտք է իմանալ, թէ կան-
գնել է արդեօք աղջիկն ճանապարհին կո-
ղովը բաց անելու համար :

Չ'գիտեմ :

— Նրբ Մատիլդան կողովը քեզ տուեց,
մէջը խառնած էր :

— Վարժեմ, ո՛չ :

— Ուրեմն ես էլ հաստատ չեմ կա-
րող ասել թէ Մատիլդան է արծաթը
վերառել :

Արբի գլխաւոր մեղադրօղի ապացոյցն .
առաւելապէս Մատիլդային էր արդարաց-
նում, քան թէ իւրեան : Յետոյ հարց-
րին միւս ծառաներին, որոնց ասածներն
աւելի անհիմն էին :

Գատաւորը Մատիլդային մեղադրել
չէր կարող . ոչինչ բանումը չէր երևում
նորա գողութիւնն : Այնու ամենայնիւ նա
սկսեց խստիւ խօսել որբի հետ ու զանա-
զան հարցմունքներ տալ, որ շփոթի նո-
րան, բայց աղախնի պատասխաններն չէին
փոփոխվում : Գատաւորն ուղարկեց Մա-
տիլդային միւս սենեակը ու տիկնոջը ասեց .

— Արբը, ինչպէս երևումէ, բոլորո-
վին անմեղ է և այս բանն յառաջացել է
նորանից որ դուք ամենից աւելի էք եղել
սիրում :

Տիկինն չէր այնքան հաւաստի Մատիլ

դայի անսկզբեան մէջ, որքան ինքն դա-
տաւորը: Աւ որովհետեւ նա կարծումէր
որ այնուհետեւ էլ լաւ չէ Մատիլդայի
համար այն տեղ մնալ, այս պատճառաւ
երեք օրից յետոյ արձակեց նորան իւր
տանից, որտեղ այնքան ժամանակ նա բաղ-
դաւորութեան մէջ անց էր կացրել իւր
օրերը:

Խղձալի Մատիլդան երեսայութիւնից
սկսած՝ շատ վատ վիճակներ ի պատահելով,
յոյսը կտրեց որ կրկին բարերար դռնէ:

Յաւալի մտքերով գլուխը լեքը, դի-
մեց գէպ՝ ի Յուզ քաղաքը, որ տեղ յոյս
ունէր մէկ պաշտպան դռնել:



ՉՈՒՆԾԵՆՎ :

Ցուգ քաղաքն պատած է Շ վէիցարիի
գեղեցիկ գեղեցիկ տեսքերով : Աճի մօտ
եղած բլուրներն աննկատելի կերպիւ բարձ-
րանալով միանումեն հեռացած լեռների
հետ : Ամէն կողմից երևումեն սիրուն դաշ-
տեր, այգիք և ամառանոցներ : Հեռուից՝
կապտագոյն երևող լեռներն ծածկած են
այնպիսի սպիտակ ձիւնով, որ նայելու
ժամանակ մարդու աչքը կուրացնում է :
Այս քաղաքումը որովհետև աղքատու-
թիւնն արգելած է, որքն գնաց մէկ օտա-
րտի տուն և խնդրեց գիշերելու : Նո-
րան ընդունեցին և հարցրին թէ ով են
եղել նորա ծնողքն կամ ուր է նորա ծնն-

դեան տեղին: Մատիլդան պարզամիտ պատմեց թէ ինչպէս էր այն գեղացիի մօտ բնակուամ, որոյ կռուասէր կինն դուրս էր արել նորան իւր տանից. պատմեց նոյնպէս թէ ինչպէս Նուցերնուամբ արծաթի գողութեան մէջ մեղադրեցին:

Ուրսուլլայի ազգականաց վատ վարքի վերայ ոչինչ չէր խօսում: Նա լսողներն շատ զարմանումէին, որ աղջիկն խօսելու ժամանակ ոչինչ անբաւականութեան նշոյլ անգամ չէր ցոյց տալի իւր անարգողաց դէմը:

Մատիլդայի պարզմտութիւնն, անսովոր դատողութիւնն և ամաչկոտ հեղութիւնն գրաւեցին բոլոր նորան լսողները: Մի քանի ժամանակով վճռեցին որ զանազան ընտանեկան գործեր յանձնեն նորան, մինչև ի մէկ կամ միւս գերդաստա-

նուամբ տեղ գտնեն: Մատիլդան, ինչ որ
միանգամայն հրամայուամէին նորան, մեծ
յօժարութեամբ կատարուամէր և կարճ ժա-
մանակուամբ ամէնու սիրելի եղաւ: Չնայե-
լով իւր սեպհական անթիւ գործերին,
այս աղջիկն աշխատուամէր ուրիշ մարդ-
կանց էլ օգնելու: Բնդ նմին նա էր խո-
նարհ և իւրանից մեծին լսող: Փատահած
ժամանակին, երբ նորան խրատուամէին, նա
երբէք չէր աշխատում արդարանալ, ինչ-
պէս ուրիշ երեսայքն են անում: Մանա-
ւանդ նա չէր սիրում պարապ մնալ, ահա
այս է երեսայից ամէնամլաս կողմերից մինն.
ընդհակառակն ամէն ժամանակ իւր փոքրիկ
ընկերակիցներուն կրկնուամէր:

— Ա՛յլ չէ աշխատում, նա արժանի
չէ որ հաց ուտէ:

Մատիլդան ամէն օտար տների հետ էլ

սիրով էր վարվում և երբ նորանից մէկ
բան կը խնդրէին, ոչինչ դժուարութիւն
նորա աչքին չէր երևում: Աթէ նորանից
բաւական էին լինում, նա ոչ թէ հպար-
տանումէր, բայց աշխատումէր որ աւելի
սիրեն նորան: Արկու ամսից յետոյ որբին
յանձնեցին մի գերդաստան մէջ, որտեղ
նոյնպէս ամէնքն շուտով սիրեցին:

Մատիլդայի նոր տանուտէրը Յուզ
քաղաքի հարուսաներից մէկն էր, որ զա-
նազան քաղցրեղէնք էր վաճառում: Նա
ունէր քանի մի երեխայ, որոնցից մէկն,
տասնութեց տարեկան աղջիկն, ծնողաց ու-
րիշ տեղ գնացած ժամանակը, գողանու-
մէր նուշ, թուղ (смовка), չամիչ (изюмъ),
շաքար ևն: Արբեմն իւր ծնողացը չիմա-
ցուցած եփումէր իւր համար սուրջ, շո-
կոլադ կամ խորովումէր վառիկ:

Մէկ անգամ նորա հայրն իւր գործի մասին ուրիշ քաղաք էր գնացել: Ալօտիլդան աւելի ազատութիւն ստացաւ: Հէնց այս ժամանակ նորա մայրն էլ, մէկ գեղեցիկ դարնանային օրը, գնաց իւր ծանօթներինց մէկին տեսութիւն, որն որ բնակում էր քաղաքից յիսուն վերստ հեռու: Ահա Ալօտիլդան մնաց տանը տանտիկին և հրաւիրեց իւր ընկերակիցներին նախաճաշիկ անելու: Նա մօտ բերեց իւր հիւրերի առաջ պղակուտրներ (пирогъ), հրուշակներ (пирожное) և պտուղներ, որն որ տանը գտաւ: Զահիլ աղջկերջն ուտումէին ու զուարճանում: Յանկարծ դուռը բացուեց և Ալօտիլդայի մայրը ներս մտաւ: Վժուար չէ երևակայել թէ ի՞նչ վրդովման մէջ ընկան բոլորքը: Հիւրերն ուզումէին փախչել, բայց ո՞ւր կերթ...: Մայրն իւր

դէմքը ցոյց տւեց, որպէս թէ չէ նկատու
նոցա ներքին խառնակութիւնը և խնդրեց
աղջիկներին որ իւրեանց զուարճութիւնը
շարունակեն: Իսկ Ալօտիլդան քնթի տակը
մի քանի խօսք բտբտաց, որոնց վերայ
մայրն ուշադրութիւն չըդարձրուց:

Այն օրն անցաւ շատ լաւ, բայց հետե-
ւեալ օրը՝ մայրն բարկացած ասեց իւր
աղջկան.

— Բո վարքն ինձի չափից դուրս է
տխրեցնում. դու լաւ չես անում որ մրդի
հետ ես ընկնում: Եթէ դու այդ վատ սո-
վորութեանդ չես յաղթել, շատ տարա-
բաղդութեանց կպատահես: Անչափաւոր
լինելն՝ առողջութեան համար էլ շատ
վնասակար է ու շատ անդամ անժամանակ
(շուտահաս) մահուան պատճառ էլ է լի-
նում: Գետ այս չէ բոլորն. այդ վատ սո-

վորութեան հետ ընկնելով մենք էլ վեր-
ջապէս կսկսենք գողանալ, ինչպէս դու ե-
րէկ արեցիր: Այդպիսի վարքն բոլոր ըն-
տանեկան կառաւարութիւնը կը խանդա-
րէ, դէպ 'ի կորուստը կը տանէ. . . : Աս-
և քո հայրն ամենայն կերպիւ աշխատու-
մենք, որ սև օրւայ համար մի քանի փող
հաւաքենք. իսկ եթէ դու սկսես մեր կո-
պէկնելով աշխատած փողերը անմեղ տե-
ղը վատնել, ինչ հարստութիւն դէմ
կընկնի: Անհաւատարիմ աղջիկը՝ ժամա-
նակով վատ ամուսին և վատ մայր կը լի-
նի: Թողնենք այս. ո՞րքան խեղճեր կարող
էիր կերակրել երէկի վատնած փողերովդ:
Մէկ մտածէ՞ հիմաթէ այդ յանցանքդ քա-
նի քանի յանցանաց աղբիւր է դառնում:
Աս շատ եմ նկատել ու երբեմն տեսել
եմ, որ մեր աշխատած փողը շատ ճնճին

է. քո անհաւատարմութիւնը, քանի՞ քանի մարդկանց՝ կասկածանքի տակ է ձգել, իսկ այժմ, վայ իմ գլխիս, որ իմանուամբ մեր անյաջող վաճառման պատճառը ու անարդուամբ անհաւատարիմ աղջկաս: — Ան մտածէ և աշխատէ որ վարքդ ուղղես, ընդհակառակն՝ դու քո սովորութեանդ զոհ կրդառնաս ու յետոյ շատ էլ զղջաս՝ հնարք չի լինի ուղղվելու, ուշ կը լինի:

Մինչև մայրն յանդիմանուամէր, Ալօտիլդան լալիս էր: «Աս խօստացաւ ուղղվել, բայց ոչ սրտով, այլ մօրը հանդարտացնելու:

Մէկ քանի ամիս անցաւ և տանտիկնոջը չըպատահեց տեսնել իւր աղջկան քաղցրեղէն ուտեղիս: Ալօտիլդայի ետևից նկատուամէին, այս պատճառաւ նա ժամանակ

Հունէր եկամուտից փող թագցնելու :
Մայրն բոլորեցունց յայտնել էր նորա
վարքը և այս պատճառաւ ամէնքը մեծ
ուշադրութիւն ունէին դարձուցրած դէպ
'ի նա :

Մէկ անգամ նորա հայրն ու մայրը
հրաւիրած էին ճաշին բարեկամներից մէ-
կին մօտ : Արբ տանից դուրս էին գնում,
ճնօղքն եկամուտի գումարը համարեցին
և կրփակը յանձնեցին Ալօտիլդային : ‘Նա
խօստացաւ իրան լաւ վարել : Հէնց որ
ճնօղքը գնացին, նա իւր խօսամունքը մօ-
ռացաւ • սկսեց մտածել թէ ինչպէս իւր
առաջւայ ցանկութիւնը կատարէ : Հրա-
ւիրեց իւր ընկերներին, որոնք առաջւայ
նախաձաշիկը, որ քնթերնից դուրս եկաւ,
միտը բերելով, հրաժարօլեցան հրաւիրան-
քից : Ալօտիլդան բարկանալով այս բանի

վերայ վճռեց միայնակ ուրախանալ : Բայց
ի՞նչպէս անէ . . . : Գրամարկոյն (касса)
փող վեռառնէ, վայ թէ իմանան, որով-
հետեւ . . . : Փոխ առնէ հարեանից
պատճառն ի՞նչ հնարէ կամ հօրն ու մօ-
րից ի՞նչպէս թագցնէ . . . : Թողնենք այդ,
նւ՛մք յանձնէ :

Յանկարծ նորա մտքին եկաւ մէկ բան
ու նոյն րոպէին ձեռք տւեց ի գլուխ հանել :

— Մենք տանն ունենք եղ, ձու, խա-
վիար, մտածեց նա . եկ, ես կը շինեմ ձուա-
ծեղ ու կ' ուտեմ, առանց փող մտակը :

Ալօտիլդան պատրաստեց ձուաներ, չա-
ղացրուց կրակը և դրեց նորա վերայ կաթ-
սայ, իւղով : Բանը շատ լաւ էր գնում,
բայց հէնց որ ուղումէր ձուաները իւղի
մէջ ձգել, մէկ մարդ մտաւ կրպակը, բան
գնելու : Ալօտիլդան ' ի հարկ է պէտք է

դնար, որ ծախս անէ. այս հոգսի մէջ իւր
ղը բոլորովին մոռացաւ: Արբոր միայնակ
մնաց, մտաւ խոհանոցը, բայց ի՞նչ տես
նէ: Շատ տաքութիւնեց իւրը վառվել
էր և բոցն երկայն ու լայն բարձրանումէր
կաթսայից: Ալօտիլդան վախից չէր իմա
նում ի՞նչ անէ, վեր առաւ մէկ ամանով
ջուր և իւրի վերայ ցրիւ տւեց: Առաւծ
իւրը ցայտեղ (разбрызгалось) չորս կողմը
և մինչև քաղցրասէրի (лакомка) ձեռնե
րը, երեսը և շորերը էրեց: Նա բարձ
րաձայն կանչեց իւր երկու աղախնոց օգ
նութեանը, որոնք եկան ու փոխանակ նո
րան օգնելու, աշխատումէին խոհանոցի
մէջ հրդէհը հանգցնել: Անհնազանդ աղ
ջիկն, ցաւիցը իւր օրը անիծելով ու իւր
արածի վերայ ներքին զղջմամբ սիրտը
լիքը, գնաց իւր առանձնասենեակը: Աղա

խինքը մեծ դժուարութեամբ ազատեցին
իւրեանց տանտիկնոջ տուն ուտեղը կրա-
կից, ու վերջը եկան Ալօտիլդայի մօտ:

Վժուար է նկարագրել այս խեղճ աղջ-
կայ դրութիւնը: Նորա ուշք ու միտքը
զնացել էր, ինքը իւրեան չէր հասկանում.
դեղնել էր ու մահուան գոյն էր ստացել:
Նորա ձայնն թնդացնումէր բոլոր սենե-
ակները:

Մօտ վեց ժամին Ալօտիլդայի հայրն
եկաւ տուն: Բայց ամսոն կարծես թէ կայ-
ծակն ընկաւ նորա գլխի վերայ, երբ տե-
սաւ իւր աղջկան, գլուխն ու ձեռները
պատատած, կապկպոտած, անկողինի մէջ
ընկած: Նա հարցրեց թէ ի՞նչ է պատա-
հել: Ալօտիլդան պատասխան տալու զօ-
րութիւն չունէր և հայրն հասկացաւ բո-
լոր բանը աղախիններից: Քանի մտածու-


մէր իւր աղջկայ արածի վերայ, դող էր
անցնում բոլոր մարմնոյ անդամներովը,
ներկայացնելով ուր փոքր ժամանակի մէջ,
իւր ունեցած չունեցածը կարողէր կորց-
նել ու յետին աղքատութեան մէջ ընկել
իւր սեպհական որդւոյ ձեռովը, եթէ Աս-
տուծոյ նախախնամութիւնը չըպահպա-
նէր: Օւարմանքից էլ նա ոչինչ չը կարաց
ասել, միայն հրամայեց, որ բժշկին կան-
չին աղջկայ վէրքերը տեսնելու:

Ալօտիլդան երկար ժամանակ էր իւր
վէրքերից նեղութիւն կրում, ու երեսի
վէտը (рубецъ) ուր յաւիտեան մնաց, չա-
փազանց տգեղացնումէր նորան: Այսպիսի
մեծ՝ Աստուածային՝ պատիժը, շատ ան-
գամ էր նորան լացացնում, որովհետև նա
շատ էր իրանով պարապած: Այս օրից
սկսած նա իւր վարքը փոխեց բոլորովին:

Եւ չէր պահանջում այլևայլ նախաճա-
շիկներ և միմիայն բաւականանումէր ճա-
շովը: Ամէնքը սկսան սիրել նորան ու պատ-
ուել: Մանաւանդ իւր ճնողաց առաջի
սիրելի զաւակ դարձաւ: Մինչև անգամ
այժմ նորան ուրիշ երեսայից և հասա-
կաւոր աղջկերանց օրինակ էին շինել:
Ալօտիլդան այս պատահմունքը պատմու-
մէր ուրախութեամբ, երբ կամենումէր ու-
րիշներին խրատ տալ և վերջը աւելաց-
նումէր.

— Տարաբաղդութիւնն էլ իւր օգուտն
ունի: Աստուած կամեցաւ ազատել ինձ
այն անդունդքից (пропасть), դէպ 'ի որն
որ ես վաղումէի ընկնելու . . . : Այսօր
էր, վաղն էր, ես պետք է իմ կրքիս զոհ
էի դարձել, ես պետք է իմ կրքովս կո-
րել էի: Գողութեամբ՝ ես իմ ճնողացս

և բարեկամացս անունը պետք է կտարէի,
անպատիւ անէի: Փառք Աստուծոյ որ նա
ինձ դէպի ուղիղ ճանապարհը դարձրեց:



ԹՈՒՉՈՒՆԻ ԲՈՒՆ:

Արբն, որ այս պատահման վկայ էր,
չէր մոռանում երբէք Ալտաիլդայի ստա-
ցած խրատը, ու քանի մեծանումէր, այն-
քան աւելի էր խելօքանում:

Զահիլ աղջկանց պակասութիւններից
մէկը շատախօսութիւնն է, որոյ պատճա-
ռաւ չեն կարողանում մէկ զաղտնիք պա-
հել: Շատ ընտանեաց մէջ հէնց այս է
լինում երբեմն մեծ անբաւականութեան
պատճառը: Մատիլդան այս վատ սովո-
րութիւնից էլ ազատ էր. մինչև անգամ
ամենափոքր բաների մէջ նա խուլ ու համր
էր ձևանում:

Արքն ամէն օր երեխայից հետ դնու-
մէր լճի մօտ մանգալու : Մինչև երեխայ-
քը կըխաղային, նա ծառի տակը նստած,
ծաղքներ էր քաղում, հաւաքում : Փոքր
ժամանակից յետոյ, նա ծանօթացաւ մի
ծծմերի հետ, որ նոյնպէս այնտեղ էր բե-
րում երեխաներին : Արկուսը միատեղ
նստած կամ բան էին կարում և կամ գոր-
ծում, մէկ մէկու հետ խօսելով :

Մի անգամ այս բարեկամները տեսան,
որ ծառի վերայ նստած է մէկ թռչուն ու
կտուցով բռնած ունէ յարդ (СОЛОМА) :

— Ահ, ի՞նչ սիրուն ծիտ է, ասեց
Մատիլդա . տես, տես, Ա՛ղիսաբէթ, նա
բուն է շինում... : Տեսնե՞ք, ո՞ւր է բունը... :

Աղջկերքը վերկացան տեղիցը ու սկսան
աչքով հետևել թռչունին, որն որ տե-
րևից տերև թռչելով, մտաւ ծառի մէկ

փոքրիկ դուրս փորած տեղը: Մատիլդան
Նղիսաբէթի օգնութեամբ բարձրացաւ
ծառի վերայ, գտաւ բունը ու ասեց ըն-
կերակցին:

— Մէկ քանի օրից յետոյ այստեղ
ձուաներ կը լինեն, գիտե՞ս:

— Սի բե լե Մատիլդա, ասեց Նղիսա-
բէթը, ոչոքին չը ցոյց տանք այս բունը,
խօսք կըստան ինձ:

— Խօսք եմ տալի, պատասխանեց Մա-
տիլդան:

— Ախ. ի՞նչ լաւ է, կանչեց Մատիլ-
դան, թէ տեսնես ի՞նչ սիրուն է բունը
չինսած . . . : Յարդը, ձիու մազերը ու
մամուռը (МОХЪ) ինչ լաւ են մէկ մէկու
հետ հիւսած: Այսպիսի փոքրիկ կենդա-
նիքն էլ, մինչև այսքան խելօք լինի՞ն . . . :
Վերելից ծառի կեղևն է պաշտպանում,

ու մէջը հինգ սպիտակ ձուաներ են դար-
ած, կարմրագոյն նշաններով տես:

Հէնց որ Մատիլդան ծառից վար ե-
կաւ, թռչունն մտաւ բունը ու նստաւ
ձուաներու վերայ:

— Օգարմանալի բան է, ասեց Նդի-
սաբէթը, որ այսպիսի փոքրիկ թռչունն
այնքան երկարատես է որ իւր բունը թաղ-
ցընումէ մարդիկներից, պաշտպանում է
անձրեից ու մի և նոյն ժամանակ, ի՞նչ
պէս մաքուր է պահում, որ իւր ձուտերը
առողջ ու զուարթ դուրս բերէ: Մօր
սէրն դէպ ի իւր ձագերը նոյնպէս շատ
զարմանալու բան է . . . : Գու ոչ որին չես
ցոյց տալ այս բունը չէ . . . : Այն
ժամանակ մենք կըզուարճանանք նոցա վե-
րայ, տեսներով թէ ի՞նչպէս փոքրիկ ծտե-
րը կամաց կամաց մեծանումեն: Ամէն օր

մենք նորանց կը կերակրենք :

Մատիլդան կրկին խօստացաւ ոչ ոքին չը ցոյց տալ այն բունը : Աղջկերքն ամէն օր այն թռչնոց վերայ էին խօսում, բայց բունը նայումէին շաբաթը երկու կամ երեք անգամ : Ա երջապէս ձագերը դուրս եկան ու նոքա սկսան հացի փշրանքը թրուջել ջրի մէջ ու նորանց ուտեցնել : Պէտք է տեսել էիր թէ ինչ ուրախութեամբ մտիկ էին անում, երբ տեսնումէին դեղնազոյն կտուցները բացած, իւրեանց հօր կամ մօր կտուցից կերակուր առնելիս :

Մէկ անգամ Մատիլդան մէկ ժամից աւելի, նստած ծառի տակին, սպասումէր Աղիսաբէթի գալուն, բայց նա չէր երևում :

— Վարելի է, մտածեց նա, մէկ հարկաւոր բան է սպասահել :

Յանկարծ տեսաւ, որ մէկ լաւ հազ-
նուած մարդ, հինգվեց տարեկան երեխե-
րանց ձեռիցը բռնած դալիս է: Արեխայ-
քը շատ տխուր էին և ինչպէս աչքերից
երևումէր շատ էին լաց եղել:

Հայրն ուրախացնումէր և խոստանում,
որ առաջի յարմար դիպուած ին նորանց
նեղութիւնը հեշտացնէ:

— Ասա՛ ինձ խնդրեմ, ասեց նա, դառ-
նելով դէպ ի Մատիլդան, չե՞ս կարող
մէկ փոքրիկ խնդիրս կատարես . . . :

— Հատ մեծ ուրախութեամբ, Պա-
րոն, պատասխանեց որբը, ինչին ձեռս կը-
հանի, ամէնի պատրաստ եմ: Ի՞նչ էք
կամենում:

— Տեսնումես, ինչպէս երեխայքս տը-
խուց են: Այս օրերիս սորանց համար մէկ
բուն առ ի ձագերով, որ ցանկանումէին մե-

Տացնել . . . : Բայց ահա, գիշերս, կատուն յափշտակել էր ձագերին . . . : Չէս իմանում մէկ բունի տեղ կամ թէ որտեղ կարելի է գնել. ասա խնդրեմ :

Մատիլդան մի քանի ըրպէ մտածելուց, պատասխանեց :

— Չէ, ես չգիտեմ որտեղ են ծախում, բայց մի քանի օր առաջ ես իմ ընկերակցիս հետ մէկ բուն գտանք, բայց չեմ ցոյց տալ :

— Ինչո՞ւ, դու կամենումես քեզ համար :

— Չէ, պարոն Ինձ հարկաւոր չէ, բայց ես խօստացել եմ ոչ ոքի չը ցոյց տալ :

Ուրեմն, մի՞թէ չես ուզում խնդիրս կատարել : Այդ լաւ չէ :

— Բայց խօսումունք չկատարելն առաւել վատ է : Աս խօստացայ ընկերակցիս

ոչոքի չըցոյց տալու և էլ չեմ ցոյց տայ,
որովհետև Աղիսաբէթն ինձի կը նախատէ,
եթէ իմանայ նորա խորհուրդը չեմ պահել:

— Ի՞նչ խորհուրդ, ի՞նչ ես ասում,
դու մոծակից ուխտ ես շինում: Այս տեղ
ի՞նչ վատ բան կայ, որ չես ուզում ինձ
բունը ցոյց տալ:

— Աս, Պարոն, այդ բանին այդպէս
չեմ նայում. եթէ հիմա փոքրիկ խօսու-
մանս մէջ չը լինեմ հաստատ, մեծն էլ
հեշտ կարող եմ մոռանալ: Այլ որ չէ կա-
րող թեթև խորհուրդը պահել, նորան
ծանր խորհուրդներն էլ չեն յանձնելու:
Աւրեմն, Պարոն, անսկող ինձի չը նեղաց-
նէք, որ չեմ ասել:

— Ականջ դիր, ինքնասաժ, ահա քեզ
կը տամ մէկ մանէթ արծաթ փող. հի-
մա՞ էլ չես ցոյց տայ:

— Աչինչ բանի համար չեմ անել այդ փողի համար ես իմ խօսքս կոտրեմ, չէ, չէ ամենևին: Թող այդ փողը մնայ ձեզ մօտ, դուք շատ աղքատներ կարող էք գտնել, որոնք ուրախութեամբ կընդունեն այդ:

Մատիլդան կանչեց երեսանց իւր մօտ և գնաց տուն, իսկ այն Պարոնն իւր տղերանց հետ շարունակեց լճի ափի մօտ ման գալը:

Միւս օրն ընկերակիցքը սովորական ժամուն պատահեցան միմեանց և նորանց առաջի բանն էր, որ բունը տեսնեն:

— Խեղճ թռչնիկներ, ասեց Մատիլդան: Արէկ ուզումէին քեզ խլել այս տեղեց. դուք էլ, շատ կարելի է, կատուի զոհ դառնայիք:

— Ի՞նչպէս, հարցրեց Աղիսաբէթը:

Արբն այն Պարոնի հետ անցածը բոլորը
պատմեց և ասեց նոյնպէս թէ նա փող էլ
առաջարկեց :

Աղիսարէթը շատ զարմացաւ Մատիլ-
դայի այսքան հաստատ բնութիւն ունենա-
լուն վերայ . նա շնորհաւորեց յաղթու-
թիւնը և ասեց .

— Խօսք պահելն ու այն փողի փորձան-
քի յաղթելը քեզ համար աւելի թան-
կագին են, այնպէս չէ : Այն փողը որ ձե-
ռիդ կը լինէր քեզի մեղադրող պէտք է
դառնար : 'Ն հարկ է դու կարող էիր ցոյց
տալ բունը նորան, փողն առնել ու ինձ ա-
սել թէ չես գիտեր ինչ են եղել ձագերը .
բայց այն ժամանակ խղճմտանքը քեզ ինչ-
քան պէտք է տանջէր . . . : Հիմա երևի
սրտումդ ուրախ ես քո հաստատ կամք ու-
նենալուն վերայ : Տեսնո՞ւմես, մէկ պատահ-

մուկքը կարող է մարդուս լաւ ու վատ կողմը
մը ցոյց տալ: Շատ անգամ ասումես թէ
խօսքիս տէր կը լինեմ, հէնց փորձանքի
ժամանակ, մոռանումես ասածդ: Ահա,
նոյն իսկ փորձանքի ժամանակ պէտք է
միտդ բերես խօսամուկքդ: Ն՛նչպէս յետոյ
ուրախանումես, որ յաղթող գտնվեցար:
Ննչ որ երէկ պատահեցաւ շատ կարեւր
է ուրիշ անգամ էլ պատահի, և
դու ամէն ժամանակ յաղթող գտնվելու ես:

Մատիլդան երբ տուն էր յետ դառնում
պատահեց առաջի օրւայ Պարոնին:
Սա էր մէկ օտարական, որ իւր սիրելի
ամուսնոյ կորցնելից յետոյ, եօթը որդւոյ
տէր էր մնացել. բայց որոնցից հինգն արդէն
վախճանել էին: Ահա այս անտանելի
դրութեան մէջ, նա եկել էր Քվեցերիայումը
զբաղվելու, և նորանով իւր վիճա-

կը թեթեւացնելու :

Մատիլդայի վատահ բնութիւնը նորա վերայ մեծ ապաւորութիւն ունեցաւ : Նա նորան համեմատումէր ուրիշ ուրիշ աղջկանց հետ, որոնք առանց դժուարութեան մոռանումէն տուած խօսքը :

Եթէ աղջիկը դեռ այս հասակի մէջ այսպիսի վատահութիւն ունենայ, 'ի հարկ է, մտածումէր օտարականը, ժամանակով լաւ տանտիկին կարող է դառնալ : Այսպիսի ճշմարտասէր սիրտը, մեծ ապահովութեան է արժան. այսպիսի աղջիկը ամէն ընտանիքի մէջ թանկագին է : Հարկաւոր է մանրամասն իմանալ նորա մասին :

Եւ ճշմարիտ որ օտարականն սկսեց, ծածուկ, տեղեկութիւններ հաւաքել, թէ ո՞րտեղ է Մատիլդան ծնվել և ի՞նչ դրութեան մէջ է : Նա իմացաւ որ այն աղ-

Ջիկը որք է և թէ նա իրան վարում է
շատ համեստ: Ամէնքը նորա անհատ ար-
ժանաւորութիւններն էին գովում: Աւ-
այս ամէնը շատ էր զարմացրել օտարա-
կանին:

Մատիլդայի հետ խօսակցութիւնից
յետոյ անցել էր մէկ շաբաթ, երբ օտա-
րականը գնաց լճի մօտ ու տեսաւ որքին
նստած Աղիաաբէթի հետ ծառի տակին:
Նորա տեսածին պէս աղջկայ գոյնը թռաւ:
Նա կարծեց թէ այն Պարոնը կրկին պէտք
է բունի մասին խօսակցութիւն բանայ և
շատ անբաւական էր նորա հետ կրկին պա-
տահման վերայ: Բայց նա հանդարտեցաւ,
երբ օտարականն սկսեց հետևեալ կերպով
խօսել.

— Աս էլ քեզ չեմ նեղացնել
այլ ընդ հակառակն եկել եմ ասելու, որ

քո վաստահութիւնն (հաստատ բնութիւն
ունենալն) ինձ շատ զարմացրուց և գրա-
ւեց : Այս քո մասին տեղեկացայ և գոհա-
ցայ բաղդիցս, որ ինձ միջոց տւեց քեզ
հետ ծանօթանալու :

Գիտեմ որ տանտէրներդ քեզի շատ
են սիրում, և դու էլ շատ ափսոսալով
կը թողնես այդպիսի լաւ ընտանիքը :
Բայց ես խնդրումեմ քեզանից, որ ինձ
մօտ գաս և իմ ընտանիքի մէջ տանտիկ-
նութիւն անես : Այս ծնվել եմ Չվիցերի-
այումը, և Բաւարիայումը ունեմ բաւա-
կան մեծ կալուածներ : Ամուսնիս մահից
յետոյ ինձի տխրալի էր հայրենիքիս մէջ
մնալը, որտեղ ամէն բանն ինձ միտ էր բե-
րում անդառնալի կորուստս : Այս վճռեցի
Չվիցերիայում կենալ, ցանկանումես ինձ
մօտ տանտիկին լինել : Այս մեծ հաւատար-

մութեամբ բոլոր տունս կը յանձնեմ քեզ :
Եւ հաւատի եմ որ այն շնչին բանի մէջ
այնպիսի վատահաղջիկը , ինձի չի խաբել :

Մատիլդան չգիտէր թէ այս անակնու-
նելի առաջարկու թիւնը ինչպէս ընդունէ :
Առաջ , կարծելով թէ օտարականը ծաղը
է անուամ , կամեցաւ հեռանալ . բայց Քա-
ւարացին բռնեց նորան ձեռիցը և պատաս-
խան խնդրեց : Մատիլդան չ'ընդունեց այս
առաջարկու թիւնը , ասելով թէ դեռ այն
տարիքը չունի , որ այդպիսի դժուար լու-
ծը քաշէ : Չնայելով նորա բարձր հասա-
կին , դեռ տասնու հինգ տարեկան ու կէս էր :

Օտարականը հաստատ հաւատացած
էր , որ Մատիլդան կարող է տուն ու տե-
ղը լաւ կառաւարել : Ինչ ասես աղջիկը
պատճառ էր բերում , բայց օտարականը
չ'կամեցաւ էլ լսել նորան և ասելով , թէ

վաղը կրգամ տանտիրոջդ մօտ միտքս յայտնե լու, դարձաւ իւր տուն:

Երբ Մատիլդան եկաւ տուն, պատմեց բոլոր անցքը իւր տիկնոջը: Աւաճառականն վերջապէս հասկացաւ թէ ինչու որբի վերայ այնպէս մանրամասն էին հարցու փորձ անում և ասեց նորան, թէ օտարականի առաջարկութիւնը մտադրութեան արժան է:


Միւս օր, ճշմարիտ որ Քաւարացին եկաւ տանտիկնոջ մօտ և նորա հետ մանրու բարակ խօսեց: Աւերջապէս քաղցրեղէն վաճառողի կիներ կան չեց որբին ու ասեց.

— Չորս տարիից աւելի է ինչ որ դու իմ մօտս ես կենում և ես միայն դովել կարեմ քո վարքը, բարքը և հաւատարմութիւնը: Թէպէտ քեզնից բաժնովն ափսոսումեմ, այնու ամենայնիւ խղճմտանքս

ինձ հարկադրում է, որ ես բարեհաճեմ
այս Պարոնի մտադրութեանը, որ քեզ
հայրութիւն է կամենում անել: Գու թե-
պէտ դեռ ջահիլ ես, բայց միտքդ բանին
հասնում է: Աս հաւատացած եմ որ դու
լաւ կը կատարես պարտաւորութիւններդ,
որոնք որ նոր դրութիւնը քեզնից կը պա-
հանջէ: Գլխաւորն այն է որ քո բաղդա-
ւոր վիճակովդ չը պարծեանաս. միտքդ բեր
քո խեղճ դրութիւնը և ամէն ժամանակ
այն կանոններով վարվիր, որոնցմով մին-
չև հիմա վարվումէիր:

Մատիլդան յաւելումաճ սրտով լսու-
մէր իւր տանտիկնոջ խօսքերը և համա-
րեա թէ նորան մեղադրումէր խստասրտու-
թեան մէջ: Նա մեծ դժուարութեամբ
ընդունեց օտարականի առաջարկութիւնը
և վճռական պատասխան տալու համար,

երեք օր ուղեց ժամանակ: Արջապէս
իւր տէրանց և բարեկամաց հետ խորհուրդ
անելից յետոյ, նա թողեց քաղցրեղէն վա-
ճառողի տունը:



ՆՈՐ ՓՈՐՁԱՆԻՔ:

Տասնուհինգ տասնուվեց տարեկան աղջկան, այսպիսի հաւատարմութիւնից աւելի ի՞նչ բանը կարող էր փաղաքշել, գրաւել: Մատիլդան այնքան ծառայից վերայ հրամանատու պէտք է լինէր, որոնցից ո՛չ մէկը չէր նորանից փոքր հասակով: Աւնա այս դժուար բանին ձեռք տւեց այնպիսի իմաստութեամբ, որ ամէն մարդ կը զարմացնէր:

Մատիլդան ամէն բանի մէջ մտադիր ու գործունեայ էր: Նորա բարեմտութիւնը, նորա հեղութիւնը ամէն քայլի մէջ

էր փայլում: Տանուտէրը ընտրութեամբ
բաւական լինելով իւր բոլոր տուն ու տե-
ղը յանձնեց նորան:

Մատիլդայի խելօք վարմունքը պէտք
էր որ պաշտպանէր նորան նախատանքից.
Բայց ընդհակառակն մեծ չարութիւն նո-
րա դէմ էր պատրաստում, մեծ հոր էր
փորում նորա համար: Մատիլդան վեց
ամսուայ տանտիկին էր, երբ այս անակ-
նունե լի դէպքը պատահեցաւ, որն որ նո-
րա վիճակի վերայ մեծ ներգործութիւն
ունեցաւ:

Օտուայքը, տեսնելով ջահիլ աղջկան
այնքան պատուի ու փառքի մէջ, սկսան
նախանձիլ և աշխատիլ որ նորա դրու-
թիւնը դժուարացնեն:

Մատիլդան շատ բարեսիրտ լինելով չէր
զանգատում տանտիրոջը: Բայց նորա նա-

խանձողները այս բարեսրտութիւնը թու-
լութիւն համարելով, առաւել մեծ մեծ
չարիք սկսան պատրաստել:

Տաճիկ աղջիկը միայն հարկաւոր եղած
բաների վերայ էր փող բանացնում: Այս
պատճառաւ նորան ժլատ էին կանչում:
Պատահումէր որ Մատիլդայի թշնամիքը
իւրեանց կերակուրները կը փոխէին վատի
հետ և այնպէս ցոյց կը տային տիրոջը,
ասելով. «հա մեր տանտիկնոջ ժլատու-
թեան հետեանքը: Բայց որքը նորանց
ստութիւնը հաստատումէր: Աւերջապէս
տանտէրն արգելեց որ էլ չհամարձակեն
այնպիսի զանգատներով իւրեան մօտ գալ:
Ծառայքը տեսան որ այս կերպով իւր-
եանց նպատակին հասան, ուրիշ աւելի
չարագոյն հնարք բանացրին: Ամէնուն
յայտնի էր որ Մատիլդան խեղճ աղջիկ

էր և բաց 'ի նշանակած ռոճիկը ոչ մէկ
տեղից եկամուտ չունէր: Տանուտէրը նո-
րան տալիս էր բաւականին ռոճիկ, որն որ
դարանի մէջ մեծ զգուշութեամբ հաւա-
քումէր: Մէկ քանի ժամանակ խօսումէին
թէ ծառաները փողեր են կորցրել: Տա-
նուտէրը չգիտէր ումը մեղադրէ, և սկը-
սեց մէկ մէկ ծառաներից հարցնել: Ամէն-
քը միաբերան երդումումէին թէ փողն
կորցրել ու իւրեանց խօսքերը անմեկնելի
հանելուկներով պատումէին: Քանի այն
խորհուրդը ծածկումէին, տանտիրոջ նե-
ղութիւնը մեծանումէր, անհանգստութիւ-
նը աւելանումէր:

Մէկ անգամ երբ նա զբօսնումէր պար-
տէզումը, կանչեց իւր մօտ պարտիզպանին
և սկսեց նորա հետ խօսել, որ իմանայ թէ
ո՞ւմ վերայ է առ հասարակ գողութեան

կարծիքը: Պարտիզպանը պատասխանեց
բայց հատկապես խօսքերով:

— Այն ժամանակ այս բոլորն ի՞նչ է՞նչա-
նակում, բարկացած ասեց տանտէրը. ի՞նչ
հարկաւոր է թագոյնէ: Աթէ մէկնումէկին
վերայ կասկած ունէք, ասէք համարձակ:
Բնտանիքի մէջ ո՞չ ոքի վերայ չ' ունէք
կասկած:

— Ի հարկէ ունենք, պատասխանեց
պարտիզպանը, բայց մենք չենք կամենում
ո՞չ ոքի մեղադրել:

— Աւրեմն ես պէտք է հարկադրած
լինեմ տանս գողնօր պահում: Բայց պէտք
է ճշմարիտն ասել, մինչև հիմա իմ տանս
ոչինչ չէ կորել:

— Արեւի վախում են ասեց պարտիզ-
պանը:

— Բէհ, ասա՛ ինձ, ո՞ւմնես կասկածում:

— Զեմ կարող, յետագայն բոլորը կը
յայտնէ :

Տանտէրը դարձաւ տուն մեծ անհանգս-
տութեան մէջ, որովհետեւ չէր իմանում
ինչ անի : Մէկ թէ մտածումէր որ դատաւ-
ւորին յայտնէ, մէկ էլ մտածումէր որ ողջ
ծառաները բաց թողնէ : Մի խօսքով չէր
գիտում ինչ բանի ձեռք տայ :

Երբ Մատիլդան նորա մօտ եկաւ ըն-
տանեկան գործի մասին, տանուտէրը նո-
րան իմացրուց այս բանը : Բարի աղջիկը
աշխատեց նորան հանդարտացնել, խոր-
հուրդ տալով որ չը շտապի, բայց սպա-
սէ յարմար ժամանակին, մինչև գողը
յայտնվի :

Մէկ քանի օրից յետոյ հիւրներկալու-
թեան ճաշ ունէին պատրաստած և Մա-
տիլդան շատ դադարեցաւ : Ճաշից յետոյ

Նա պառկեց, որ փոքր ինչ հանգստանայ :

Այս ժամանակին ծառայքը խորհուրդ արին և վճռեցին որ իւրեանց սատանայական միտքը գլուխ բերեն, ջահիլ աղջկան կորցնեն :

Էտեւալ օրը, առաւօտը վաղ, Մատիլդան գնացել էր եկեղեցին և այնտեղից պէտք է գնար զանազան բաներ առնելու (գնելու) :

Էնց որ տանուտէրը վերկացաւ, մէկէլ տեսնես ծառայքը, պարտիզպանն առաջին, եկան նորա մօտ : Նորա խնդրումէին որ իւրեանց ետեւից գնայ :

— Ա՛ր, ինչո՞ւ գամ ձեր ետեւից հարցրեց տանուտէրը :

— Մենք կամենումենք որ քանի Մատիլդան այստեղ չէ իմանանք թէ արդեօք այս կորստեան պատճառը նա չէ :

— Խոնչ էք հանաք անում: Նա այդպիսի գործքերի ընդունակ չէ: Նս կարող եմ նորա տեղ պատասխան տալ:

— Խնդրումենք, Տէր, եկէք մեզ հետ: Նրէկ էլ իմ տանուհինգ Ֆրանկս գողացան, ասեց խոհարարը, արտասուքը սըրբելով:

Տանտէրը շատ զարմանումէր ուր ուրբին գողութեան մէջ են մեղադրում: Նա թէպէտ պաշտպանումէր շատ, բայց տեսնելով ուր ոչոքի չէ կարողանում հաւատացնել, վերկացաւ գնաց նորանց հետ Մատիլդայի սենեակը:

Ղռները բաց արին և սկսեցին որոնել ամէն մէկ բանը: Վարասիքի մէջ ոչինչ չ'գտան: Վամենումէին դարանը կոտրել: Բայց տանտէրը արգելեց նորանց: Տեսնելով ուր ոչինչ չը գտնվեցաւ մէկ քանի ծա-

ուայքը կամենումէին դուրս գնալ, երբ
պարտիզպանը առաջարկեց որ անկողինի
մէջ որոնեն: Քարծը որ վերառին յան-
կարծ տեսնեն որ նորա տակը մինչև չորս
հարիւր Ֆրանկ, քսան երեսուն և քա-
ռասունանոց կապերի մէջ, դարսած էր:

Ամէնքը ապշացած, զարմացած մնացին:

Աարե լի՞ է միթէ, որ Մատիլդան այս-
պիսի անարդ կեղծաւոր լինէր...: Այս-
պիսի խորամանկութեամբ ծածկած ունե-
նար իւր պակասութիւնները: Ա՞ր էն
այն խիստ կանոնները, որով, կարծես թէ,
վարւումէր. ի՞նչ ճարտարութեամբ ինձի
խաբում է եղել...: Ի՞նչ անխիղճ ու
ցած բան է, խեղճ մարդկանցից այն դա-
ռը քրտնքով աշխատած փողերը յափշտա-
կել: Մինչև հիմա Մատիլտան հեղ ու
խոնարհ աղջիկ էր երևում: Ի՞նչպէս նա

իւր սատանայական հոգին թագցրած է
ունեցել արտաքին հրեշտակային կերպա-
րանքի տակը: Այս անհաւատալի բան է:
Այնու ամենայնիւ ամէն բանը նորան է
մեղադրում: Հինգ մարդ գանգատում
են, սենեակի մէջ որոնում են ու անկողինի
մէջ իւրեանց կորցրած փողերը գտնում:
Ուրեմն Մատիլդան մեղաւոր է:

Այս ժամանակին ջահիլ աղջիկն էլ ե-
կաւ և շփոթի ձայն լսելով, շուտով մտաւ
իւր սենեակը: Որքը շատ զարմացաւ երբ
ծառաները դէմ եկան և սկսան նախատել:
Նա քարացած մնաց, երբ նորան ցոյց
տւին գտնուած փողերը և արած նախա-
տինքը աւելի խիստ կերպով կրկնեցին.

Տանտէրը հրամայեց ծառաներուն որ
լռեն. բարկացած դարձաւ դէպ 'ի որքը
և ասեց.

— Ի՞նչպէս դու կարողացար, Մատիւ
դա, մոռանալ կանոններդ և այսպիսի յան-
ցանք գործել: Ասա՛ ինձ, ինչդ բեմ, ի՞նչդ
էր պակաս, որ այդ արեցիր:

— Կամենումէք, պարոն, համողած
խօսելից առաջ՝ ինձի ականջ դնէք: Աս՛ի
վաղուց արդէն նկատեցի, որ ծառաները
նախանձումեն ինձ որ այսքան հաւատարմու-
թիւն էք տւել, և էլ որ ես հետևումեմ
տան մէջ աւելի ծախս չը լինի: Շատ
անգամ իմ ականջովս լսել եմ մէկ քանի
խօսքեր, որով երևումէր, որ ծառայքը ու-
ղումեն անուս կոտրեն: Աս կարող եմ
ձեզ ներկայացնել վկայք, որոնց ասել են
անզգուշութեամբ, թէ ինձի ատումեն...:
Միտերնիդ է, մէկ անգամ դուք ինքնին
տեսաք որ կամենումէին ինձի զրպարտել,
ասելով թէ ես այնքան ժլատ եմ, որ ծա-

ուաներուն վատ կերակուր եմ տալի: Փոքր
ինչ ժամանակից յետոյ իմացայ, որ ձեր
ճառայքը իմ գնած (առած) միսը կամ
մրգեղէնը ծախուակէն որ վատը առնեն ու
ձեզ գանգատուեն:

Հիմա խօսենք գողութեան վերայ. շա-
րունակեց Մատիլդան: Ահա դարանա...:
Բացէք և այնտեղ կը գանէք ամսական ու-
ճիկս...: Ինչո՞ւ ես ուրիշինը կը վեր առ-
նեմ...: Ժլատութիւնից...: Ինձ ոչինչ
որ չէ պակաս ինչինս է հարկաւոր: Բայց
թէ յորտեղից են փողերը բարձիս տակ,
չեմ գիտեր: Առաւօտը ոչինչ չ'կար:

Այս տարաբաղդ պատահումները հար-
կադրեց նորան որ այն տունը թողնի, ուր
որ այսպիսի անխիղճ զրպարտութիւն կրեց:
Իւր բոլոր յոյսը Աստուծոյ վերայ դրած
ունենալով, նա համբերութեամբ սպա-
սուակէր որ իւր անսկզբութիւնը յայտնվի:

ԿԵՂ, ԵՂ, ՔԵՏ

Այս նոր տարաբաղդու թիւնը Մատիւ
դային մեծ տրամու թեան մէջ գցեց, թէ-
պէտ այժմ գոնէ ապրելու հնարք ունէր,
որովհետեւ ու թամսոյ ռոճիկը ձեռին էր:
Այս փողերով նա կարող էր Յիւրիխ քա-
ղաքը հասնել, ուր որ յոյս ունէր իւր հօր-
եղբայրը գտնել:

Ցուգ քաղաքը թողնելից առաջ, Մա-
տիւղան իւր տարաբաղդու թիւնը պատ-
մեց Աղիսաբէթին: Աղիսաբէթը թէպէտ
խորհուրդ տեսաւ որ մնայ այնտեղ և խոս-
տացաւ ուրիշ տեղ գտնել նորա համար,

բայց Մատիլդան չը համաձայնեցաւ, մէկու-
մէկ մտքումը դրել էր հեռանալ Յուզից :

Զահիւ աղջիկը մէկ քանի ժամ լայն
ճանապարհով գնալից, հասաւ մէկ գիւղը :
Այս տեղ նա տեսաւ մէկ պատուելի ծեր
մարդ, մէկ փոքրիկ խրճիթի դրանը (շիմ-
քը) նստած : Մատիլդան հարցրուց նո-
րան թէ Յուրիիսի լիճը հեռու է :

Օտրը պատասխանեց .

— Մինչև այն լիճը երկու ժամու ճա-
նապարհ կայ և ես խորհուրդ չէի տայ
Զահիւ աղջկան գիշերով միայնակ, այս
լայն ճանապարհով գնալ : Գուք կարող
էք մեզ մօտ մնալ : Աս կենումեմ միայն
կնոջս հետ . ձեզ համար անկողին էլ կը
գտնվի մեր տանը :

Մատիլդան համաձայնեցաւ մնալ և
գիշերելու համար վարձ տալ :

— Ի՞նչ հարկաւոր է վարձու վերայ
խօսել. մեզ համար այդ ոչինչ չաժէ :

Որքը ծերի կողքին նստեց : Օտրն սկը-
սեց հարցու փորձ անել ճանապարհորդու-
թեան նպատակի վերայ և վերջը առա-
ջարկեց նորան իւր մօտ մնալ :

— Մենք ծերացել ենք, ասեց նա,
մեզ հարկաւոր է տունը կառաւարելու հա-
մար առողջ, արի աղջիկ : Մեր որդիքը
ամուսնացած են և ուրիշ գիւղերումն են
կենում : Աը պատահի տարին երեք չորս
անգամ միայն գան մեզի տեսութիւն : Նո-
քա քո աշխատանաց վարձը կը տան :

Օտրի խօսքերը ու առաջարկութիւնն
Մատիլդայի սիրտը շատ շարժեց. բայց
ցանկանալով որ լաւ դատէ, խնդրեց մին-
չև վաղը առաւօտ համբերել պատասխա-
նին : Մտածելով թէ Յիւրիսումն էլ

մի և նոյն արգելքներ կարող են պատահել, նա վճռեց մնալ բարեսիրտ մարդկանց մօտ, որոնք այնպիսի հիւրընկալութեամբ ընդունեցին նորան: Առաւօտուն որբը յայտնեց իւր այն տեղ մնալու յօժարութիւնը և մի և նոյն ժամանակ գրեց Աղիսաբէթին մէկ նամակ, որով խնդրումէր նորան, իւր մնացած բաները (вещи) ուղարկէ:

Աւերջապէս որբը այս տեղ միայն արժանացաւ վայելել այն երջանկութիւնը, որն որ ոչ մէկ տեղ չը գտաւ: Հուտով նա սիրեց այն ծեր ամուսինները ինչպէս իւր ծնողքը: Նոքա էլ իւրեանց կողմից նայումէին Մատիլդային ինչպէս սեպհական դասեր: Նորա համար ինչպէս ուրախալի էր, բանուգործը աւարտելից յետոյ փոքրիկ լերան վերայ նստելը ու գիւ-

ղական բնութիւնով զուարճանալը: Մա-
տիլղան երբ գործերով պարապած էր լի-
նում, բոլոր գլխի վերայ անցած նեղու-
թիւններն ու անարգունքները մոռանում էր:
Ամէն բանով երջանիկ էր, ցանկանում էր
միայն որ իւր ընկերակից Նդիսաբէթը լի-
նէր կողքին: Արբը մէկ քանի անգամ խընդ-
րել էր ևս, որ գայ այն գիւղի մէջ բնա-
կելու: Օրերն անցնում էին խաղաղ ու
ախորժ, ոչինչ բան չէր վրդովում նորա
երջանկութիւնը:

Ա՛չ մի րուպէ նա անօգուտ չէր անց-
կացնում: Աւ այն ծեր ամուսինները չը
գիտէին թէ ինչպէս շնորհակալ լինեն որ-
բից, այնպիսի հոգացողութեան և մտեր-
մութեան համար: Մատիլղան այնքան բա-
ւական էր իւր վիճակից, որ մինչև ան-
գամ ուրախ էր Յուզի մէջ պատահած

դժբաղդութեան վերայ, առանց որոյ նա
չէր կարող պատահել այսպիսի պատուելի
և բարեսիրտ մարդկանց:

Անկ անգամ Մատիլդան կով էր կը-
թում: Խրճթին մօտիկցաւ կառքը: «Նո-
րա մտքին չեկաւ թէ գնայ տեսնէ ո՞վ է
եկել կամ ինչո՞ւ: Անկ քանի ըսպէից
յետոյ տանուտէրը եկաւ ու ասեց նորան,
թէ տանը մէկ մարդ է սպասում, որն որ
ցանկանումէ նորա հետ խօսել:

Տես, ինչպէս զարմացաւ, երբ տե-
սաւ այն Յուզի առաջւայ պարոնը, Ռա-
վարացին:

Օտերը և նորա կինը զարմացան, որ
լաւ հագլած մարդը և ինչպէս էլ երե-
ւումէր, հարստութեան տէր պարոնը, մէկ
խեղճ աղախինի դէմը կանգնած, ներողու-
թիւն է խնդրում: Ինչո՞վ արդեօք նա կա-
րող էր նորան զրպարտել:

Մատիլդան կարմրեց և վախենալով որ
չյայտնվի այն, որ կարող էր նորա այժմեան
բաղդաւորութիւնը խանգարել, ասեց, ես
վաղուց եմ բոլորը մոռացել...: Ես մին-
չև անգամ շնորհակալ եմ Աստուծուց այն-
պիսի փորձութիւն տալու համար, որով
այսպիսի պատուական մարդկանցը պատա-
հելով, մեծ երջանկութիւն գտայ:

-- Քո խօսքերը ինձի չեն զարմաց-
նում, Մատիլդա: Գուք գեղեցիկ բարք
ու վարքովդ, ամէն տեղ կարող ես լինել,
ամենու հետ կեանք վարել...: Միայն իմ
թուլութիւնս էր պատճառը որ քո վե-
րայ կասկած ունեցայ, թէպէտ և ես չէի
հաւատում որ դու մեղաւոր լինէիր: Ինչ
ըսպէից որ դու ինձնից հեռացար, ես
հանգիստ չեմ գտել, հաւատա՛ ինձ: Եւ
տով ես իմացայ որ քեզի բամբասել էին,
ինչպէս էլ որ շատ անգամ է այս բանը

պատահում անիրաւ ծառաներու մէջ :
Քեզի մեղադրողները միմեանց հետ կռուե-
ցան և նորանցից մի քանիսը յետ ուղար-
կեցի կալուածս : Աւերջապէս իմ ծառա-
ներուս բոլոր անիրաւութիւնն ու ցածու-
թիւնը իմացայ հետևեալ կերպիւ : —
Քո հեռանալուց մի քանի ամիս յետոյ՝
պարտիզպանս ծառից վար ընկաւ ու ոտը
կոտրեց : Նա բաւական ծեր էր և այս
պատճառաւ առողջանալու յոյսը շատ փոքր
էր : Բժիշկը ինձ իմացրեց իւր երկիւղը
(վտանգը) և ասեց որ ծերի համար մահ-
ուան պատրաստութիւն տեսնեմ : Հիւանդն
էլ իւր դրութիւնը հասկացաւ :

Մէկ անգամ ես եկայ պարտիզպանիս
մօտ և տեսայ նորան լալիս : Հէնց նոր խոս-
տովանած էր : Նս սկսայ նորան սիրտ տալ
և ասել որ բոլոր յոյսը դնէ Նստուծոյ

վերայ, բայց նա իւր հեկեկանքը չէր թող-
նում: Աս շատ խնդրեցի, որ պատճառը
յայտնէ, վերջապէս համոզեցի որ ասի:

„— Աս կեանքիս մէջ շատ մեղք եմ
„գործել, ասումէր նա, բայց այն մէկ յան-
„ցանքս մինչև այս օր էլ չեմ կարողանում
„մոռանալ...: Թող Աստուած խղճայ ինձ
„վերայ: Աս ձեզի կը պատմեմ այն մըտ-
„քով, որ դուք այն յանցանքիս հետեանք-
„նէրը ուղղէք: Մատիլդայի ընդդէմ հնա-
„րած դիտաւորութեան համար ես տւի
„փողը: Այն աղջիկը իսկ և իսկ հրեշտակ
„էր, այն հաւատարմութիւնը որ դուք
„ունէիք դէպ ի նա, մեր մէջ ատելութիւն
„և նախանձ պատճառեց: Մենք ապստամ-
„բեցանք նորա դէմ և խօսք տուինք, որ
„նորան ոչնչացնենք: Մատիլդայի անկո-
„ղինի մէջ... այն փողերը... ես դրի,

„Չեմ գիտեր ձեր տունը թողնելից յե-
տոյ Մատիլդայի հետ ի՞նչ է պատահել,
բայց այս զարհուրելի բամբասանքը
այս անարդ ու անիրաւ յանցանքը
քարի պէս դրած է կուրծքիս վերայ :
Գիշեր ուցորեկ այս չարագործութիւնը
աչքիցս չէ հեռանում, մտքիցս չէ կոր-
չում : Աս այժմ խոստովանեցայ քահա-
նային մեղքերս և նա ինձ խոստացաւ,
որ ձեզի խնդրէ Մատիլդայի վիճակի ու
դրութեան վերայ տեղեկանալ : “

Յետոյ ձեռը ձգեց դէպ 'ի ինձ ու
մղկտալի ձայնով, շարունակեց նա :

„— Այս . պարոն . գիտենա՞ք թէ ինչ-
պէս ծանր է ինձ համար այս խոստովան-
քը : Բայց ես ձեզ յայտնեցի և այժմ
փոքր ինչ թեթեւացրի այս բեռը, փոքր
ինչ ուրախացայ : Քանի մտիս գալիս է

„այն բամբասանքը՝ դժոխային չարչարանք եմ զգում: Զահիլ աղջկան այսպիսի անարժան կերպիւ անուատիւ անելը՝ շատ ցած, շատ անարգ բան է: Բուք ինձ կ'օգնէք, այն բամբասանքի չար հետեանքները կ'ուղղէք, չէ:“

Օտեր պարտիզպանիս պարզամիտ խոստովանութիւնը սիրտս շատ շարժեց, աչքերս արտասուքով լցրեց: Աս խոստացայ նորան որ քեզի վերայ հոգս քաշեմ, յայտնեմ նորա քեզ համար բաղդաւորութեան ցանկութիւնը: Այս տեսարանից յետոյ, որ ես երբէք չեմ մոռանալ, շուտով պարտիզպանը վախճանեցաւ: Այժմ ես իմ մտքերս եմ կամենում յայտնեմ: Քո հեռանալից յետոյ ես բոլոր գործերս վերջացրի և վճռեցի որ Զվեցերիայումը բնակվեմ: Աս գնեցի այն տունը, որտեղ

քո ժամանակը կենուամէի: Ուզո՞ւմես կըր-
կին վերադառնալ այն տեղ: Վո թշնամի-
ներից ո՛չ մինը չըկայ հիմա:

— Ա՛խ, պարոն, ինչպէս կարելի է
որ թողնեմ այս պատուելի մարդիկները,
որոնք ինձի մեծ սիրով ընդունեցին:

— Այնքա՞ն դի՛ր ինձ մինչև վերջը, ես
չեմ կամենում ընդունել քեզի, ինչպէս
տանուտեղի բանալիք պահող . . . : Թէպէտ
դու խրճթի մէջ ես ծնվել, բայց պէտք
է որ ոչխար արածացնես:

— Ինչո՞ւ չէ: Ես այստեղ բոլորովին
երջանիկ եմ:

— Ես հաւատումեմ որ դու երջանիկ
ես . . . : Բայց դու ինձ չը հասկացար . . . :
Ես առաջարկումեմ քեզ որ ամուսինս
դառնաս:

Այս խօսքերը լսածին պէս Մատիլդան

դուրս գնաց, կարծելով թէ նորան ծաղը
են անում: Ալևոր գիւղացին գնաց ետե-
ւից, յօժարացրուց նորան յետ դառնալ:
Մատիլդան դարձաւ իւր նախկին տեղը:

— Աս երեսուն և երկու տարեկան եմ,
շարունակեց մեծահոգի մարդը, և բաւա-
կան մեծ կարողութիւն (հարստութիւն)
ունեմ: Աս միայն պտուռմեմ այնպիսի կին,
որոյ օժիտը (բաժինքը) լինի առաքինու-
թիւն, հեղութիւն, խելք և խոնարհու-
թիւն: Այս ամէնը ես քո մէջ նկատեցի,
Մատիլդա: Այդ մատղաշ հասակումը քա-
շած փորձութիւնները, քո կամքին տեւ
են մէկ այնպիսի զօրութիւն, որ դժուար
է գտնել: Իմ բաղդս հիմա քեզանից է
կախած:

Մատիլդան զարմանքից քար կտրվե-
ցաւ, և պատասխանի տեղ, արտասուք

էին աչքից ողողում: Նա երբէք չէր սպասում այսպիսի առաջարկութեանը, այս պատճառաւ չէր իմանում ի՞նչ անէ, կամ ի՞նչ ասէ: Արջապէս նա խնդրեց որ ժամանակ տայ մտածելու:

Խօսակցութիւնը քանի երկարանումէր, այնքան Մատիլդան աւելի և աւելի էր երեւում բարերարի ընտրութեանը արժանի:

Երբ Մատիլդան մենակ մնաց, ընկաւ ճնկանց վերայ և աղաչեց Աստուծոյ, որ սովորցնէ թէ ի՞նչ անէ: Մէկ քանի օրից յետոյ նա այն մեծահոգի առաջարկութիւնը ընդունեց:

Թէպէտ այն ծեր ամուսինները շատ էին ցաւում, որ պէտք է բաժանուէին սիրելի աղջիկից, այնու ամենայնիւ ինքեանք անգամ խորհուրդ էին տալիս որ ընդունէ նորա առաջարկութիւնը:

Մէկ ամսից յետոյ Մատիլդան մարդու
գնաց : Հարստութիւնը նորան չը փոխեց :
Առաջւայ պէս նա էլի բարի էր և ամէն
բանով աշխատումէր իւր ամուսնոյ կամքը
կատարէ :

Ընտանեկան կառաւարութեան մէջ նա
լաւ կարգադրութիւններ արեց ու ամէնի
հետ հեղութեամբ սկսեց վարել : Նա այն-
քան աշխատումէր ընտանեկան խաղաղու-
թեան վերայ, որ երբ խանգարւումէր, ի-
րանից կախածը չէր խնայում, ձեռնաբաց
զոհումէր : Արովհետև Մատիլդան երեխա-
յութիւնից սովոր էր զանազան տարաբաղ-
դութեանց դիմանալու, այս պատճառաւ
քանի կարող էր աշխատումէր խեղճ մարդ-
կանց օգնել :

Նա շուտ շուտ երեխայից հետ գնու-
մէր այն լճի մօտ՝ որտեղ նորան առաջին

անգամ տեսաւ իւր ամուսինը ծառի տակին : Այստեղ նա միտն էր բերում իւր առաջւայդրութիւնը և ինքն իրան ասումէր :

— Մարդուս վիճակն ի՞նչպէս փոփոխւումէ : Ո՞վ կը մտածէր (կը կարծէր) թէ նոյն իսկ մարդը, որուն են այստեղ չը յայտնեցի մէկ ճնչին զաղտնիք, պէտք է ժամանակով ինձպէս խեղճ, անտէր աղջկայ ամուսին դառնայ : Այն անարգ չարախօսութիւնը յայտնեց իմ անմեղութիւնը և այսօրուայ բաղդաւորութեանս պատճառ դարձաւ : Այլ թէ ուշ ձշմարտութիւնը յայտնվումէ և Աստուած ամէնուն պարգեւումէ կամ պատժում է ըստ արժանաւորութեան : Թող շնորհակալ լինենք նորանից, թող աշխատենք ամենայն դիպուածից բարի պտուղ քաղել և շահուիլ :

Մատիլդան հէնց այս ժամանակներին

մէկ ուրիշ դիպուածի հանդիպեցաւ, որով
առաւել հաստատուեցաւ այն մտքի մէջ,
թէ ամէն մարդ վարձատրումէ ըստ ար-
ժանաւորութեան: Մէկ անգամ բակումը
անցնելու ժամանակ, նա տեսաւ մէկ կաղ
աղքատ: Մատիլդան նորան մէկ կտոր հաց
տուեց և փոքր ինչ էլ փող: Աղքատը
չնորհակալութիւն արեց, ասելով թէ շատ
դժբաղդ մարդ եմ:

— Այս անբժշկելի վէրքը, որ ոտիս
վերայ է, ինձ չէ թողնում մէկ գործով
պարապել. և ես կամայ ակամայ պէտք է
այնպիսի հնարքով ապրեմ, որն որ ինձ
ատելի է:

— Դու ո՞րտեղից ես, հարցրեց Մա-
տիլդան:

— Աս երկար ժամանակ Ա...սի դիւ-
ղումն էի կենում. բայց ահա մէկ քանի

տարի է, որ ես Ջվիցերիայ եմ ման-
գալի, ողորմութիւն ուզելով :

— Արևի դու շատ նեղութիւններ ես
կրել, որովհետև ինչպէս երևում է քո տա-
րիքով մարդը դեռ կառող է գործել, աշ-
խատել :

— Ախ, աղջիկ պարոն : Իմ դժբաղ-
դութեանս մէջ ես ինքս եմ մեղաւոր . ես
արժանի էի այս պատժին և Աստուած
ինձ տւեց :

— Աւրեմն այդ չարչարանքը պէտք է
համբերութեամբ կրես և մեղքերդ ապա-
շաւես :

— Աս այդպէս եմ անում . բայց այս
Աստուածային պատուհասը ես ստացայ
զարհուրելի յանցանքիս համար : Ասեցէք
ինձ, եթէ կամենում էք : Իմ պատմածը,
կարելի, շարժէ ձեր սրտի մէջ ցաւակցու-

Թիւն դէպ ի ինձպէս ողորմելի մարդը .

— Արբ ես գիւղումն էի կենում, ազգակիցներիցս մէկը մեռաւ: Նորանից մի քանի օր առաջ նա իւր կնոջ հետ միասին մէկ խեղճ որբ աղջիկ էին հոգևորդի շինել: Մարդոյ մեռանելից յետոյ, կինն էլ խիստ հիւանդացաւ և որովհետև մեզ յայտնի էր, որ կալուածները անդերձ ևն արած նոր ընդունած դատերը, մենք բոլորքս խորհուրդ արինք այն որբին հեռացնել: Այս բանը յանձն առի ես: Մէկ յունվարի գիշերը, ես փախցրի աղջկան և տարայ գիւղից բաւական հեռու տեղ: Այնտեղ նորան հարկադրեցի խոստանալ որ ոչոքի չ'ասէ այս անցքը: Չգիտեմ ի՞նչ է եղել այն երեխայի հետ. արդեօք սառեցա՞ւ թէ գայլոց կերակուր դառաւ: Այն օրից ես ոչինչ չեմ իմացել նորա վերայ:

Ինչ բանի համար որ ես այս մեղքը գործեցի, հէնց այնու համար էլ Աստուած ինձ պատժեց: Իմ բարեկամիս մահից յետոյ՝ մենք ժառանգներս, համաձայնելով կռվեցանք միմեանց հետ, խօսքը դառաւ ծեծ ու ոտս վիրաւորեցին: Աւ որովհետեւ վերքս չկարացին բժշկել, ես էլ գործովս չեմ կարողանում պարապել: Ա՛խ, ինչ ողորմելի դրութիւն է:

Այս պատմութեան ժամանակը Մատիլդան իւր սրտի ներքին վրդովմունքը չկարաց թազցնել: Աղքատն որ այս նկատեց՝ սկսեց ներողութիւն ուզել, բայց խեղճ մարդը քարացած մնաց, երբ ջահիլ աղջիկը ասեց նորան.

— Աստուած կամենումէր որ այս այսպէս էր պատահել: Արբեմն Յովսէփի եղբայրքն էլ նորան ծախեցին, որ յետոյ նա

նորանց պաշտպան դառաւ: Արուն որ դուք
փախցրիք, նա կենդանի է և բաղդաւոր:

— Այի, աղջիկ պարոն, ասէք աղաչու-
մեմ ձեզի, ո՞ւր է նա: Այս կերթամ նորա
մօտ, թէ և լինի աշխարհքիս միւս ծայ-
րին, խնդրել նորանից ներողութիւն իմ
անգութ յանցանքիս:

Այս հարցմունքը Մատիլդային շատ
խառնեց: Ա՛յեր ջապէս նա էլ չ'կարաց իւր
ներքին վրդովմունքը պահել ու ցաւակցու-
թեամբ նայելով կաղին՝ ասեց.

— Աղջիկը, որուն դուք փախցրիք ու
Աստուծոյ հոգացողութեան վերայ թողեք,
'ի վաղուց ներել է քեզ և քո վիճակի
վերայ հոգալու է... հէնց այն աղջիկն է
խօսում քեզ հետ:

Այս խօսքերի հետ աղքատն ընկաւ
Մատիլդայի ոտքերը ու երկունն էլ լաց

եղան : Մատիլդայի ամուսինը , որ պատուհանի ետեւից կանգնած էր ու այս սցենայի ականատեսն էր , ասեց .

— Աս էլ հաստատուեմ իմ սիրելի կնոջիս խոստացածը . և որովհետեւ խեղճ կաղը իստակ սրտով ապաշաւեց , ես էլ եմ իմ կողմանէ ներում դորան : Գա ոչինչ բանի պակասութիւն էլ չի ունենայ : Արմայ մեզ մօտ ու երջանիկ կ'ապրի :

Պ. Ե. Բ. :



119

0004017

2013

